

ՈՒՆԻՎԵՐՍԱԼԻԶՄԻ ՍԱՅՄԱՆՆԵՐԸ Բյորկի պահպանողականության մասին Յենրի Քիսինջեր

Նյութի հիմքում The New Criterion ամսագրի 30-ամյակին նվիրված հանդիսությանը (26 ապրիլի, 2012թ.) Էդմունդ Բյորկի անվան «Մշակույթին եւ հանրությանը մատուցած ծառայությունների համար» առաջին մրցանակ ստանալու կապակցությամբ Յենրի Քիսինջերի արտասանած ճառն է:

Փորձելով ըմբռնել արդիականության բարդ խնդիրները՝ օգտակար է դիմել Էդմունդ Բյորկի պահպանողականությանը: Նրա դարաշրջանը համեմատելի է ներկայի հետ: Ֆրանսիական հեղափոխությունը վերացրեց ձեւավորված հասարակական կառուցվածքը եւ միապետությունը: Ամերիկյան հեղափոխությունը շրջեց տիրող միջազգային կարգը:

Բյորկը բախվեց պահպանողականության պարադոքսին. արժեքները համընդհանուր են, բայց, որպես կանոն, պետք է կյանքի կոչվեն իբրեւ գործընթաց, այսինքն՝ աստիճանաբար: Եթե արժեքները ներդրվում են առանց պատմությանը եւ հանգամանքներին հետադարձ հայացք նետելու, դրանք բոլոր ավանդական սահմանափակումները զրկում են օրինական հիմքից: Բյորկը համակրում էր ամերիկյան հեղափոխությանը, քանզի այն դիտում էր որպես անգլիական ազատությունների բնական զարգացում: Եվ չէր ընդունում ֆրանսիականը, որովհետեւ այն, իր կարծիքով, խորտակեց ամեն ինչ, որ ստեղծվել էր սերունդների կողմից, այդ թվում եւ՝ օրգանական աճի հեռանկարը:

Բյորկի համար հասարակությունը եւ նախորդ սերունդների սեփականությունն էր, եւ հետագա զարգացման ելակետը: «Մտորումներ ֆրանսիական հեղափոխության մասին» աշխատությունում նա գրել է. «Ժառանգության գաղափարն ապահովում է պահպանման անվիճելի սկզբունքը, ինչպես նաեւ փոխանցման անվիճելի սկզբունքը՝ ամենեւին չբացառելով կատարելագործման սկզբունքը»: Այդ ոգով զարգացող հասարակությունը կպարզի, որ «կատարելագործվելով՝ մենք երբեք լիովին չենք նորացվում, իսկ ինչը թողնում ենք, մենք այնտեղ երբեք լիովին չենք պահպանում հնացածը»:

Այստեղից էլ հաշվենկատությունը. «ամեն ինչում կա առաքինություն, իսկ քաղաքականության մեջ՝ առաջնային առաքինություն»: Գործնականում հաշվենկատությունը ծնունդ է քաղաքականության, որը, ինչպես գրել է Բյորկը 1789թ., «ստիպում է մեզ, թերեւս, լուռ համաձայնել վերացական գաղափարի մարմնավորման մի ինչ-որ սահմանափակ, քան այդ գաղափարը կատարելության հասցնող պլանի, որը չի կարելի իրագործել՝ չքանդելով հասարակական կառուցվածքի հենքը»:

Այս ճշտման մեջ է մեր հասարակությունում պահպանողականության եւ ազատականության, պատմությանն ուղղված հայացքի՝ որպես օրգանական գործընթացի կամ ինչ-որ մեկի կամոք տեղի ունեցող դրվագների շղթայի միջեւ տարածայնությունների էությունը: Դա որոշ չափով բացատրում է այն տարբերությունը, որն առկա է Բյորկի պահպանողականության (ինչպես ես այն հասկանում եմ) եւ նեոպահպանողականության առանձին կողմերի միջեւ:

Այս հակասություններն ինչ-որ բանով նման են ընտանեկան վեճին: Շատ նեոպահպանողականներ իմ մտերիմ ընկերներն են, ես հաճախ եմ համաձայնում որեւէ կոնկրետ իրավիճակի վերաբերյալ նրանց վերլուծության հետ եւ հարգում նրանց համոզմունքները: Ես նաեւ բավական մոտիկից եմ նրանց ճանաչում, քանզի ժամանակ առ ժամանակ դարձել եմ երկու կողմից գաղափարախոսական գծի հարձակումների օբյեկտ: Մեր հայացքների տարբերությունը գլխավորապես վերաբերում է ընդհանուր նպատակներին հասնելու մեջ պատմության դերին:

Այս տարբերությունը հաճախ իր արտահայտությունն է գտնում վերացական վեճերում, թե որն է գերիշխում միջազգային հարաբերություններում՝ ո՞ւժը, թե՞ արժեքները: Իրատեսական արտաքին քաղաքականության կողմնակիցներին ծաղրաբար ասոցիացնում են գերմանական *Realpolitik* եզրի հետ, որպեսզի, իմ կարծիքով պարզեցնեն ընտրությունը, թե կողմերից որ մեկին տալ նախապատվությունը: Այս ուռճացված պատկերում միջազգային հարաբերությունները ներկայացվում են իբրեւ պարբերաբար իրար բախվող բիլիարդի գնդակների հաջորդականություն, որոնց հարվածների հետագիծը եւ ուժը կարելի է հաշվարկել ու կատարելագործել: Հաստատվում է, որ «իրատեսական» արտաքին քաղաքականության համար արժեքներն էական չեն. ուժերի հաշվեկշիռն է նրա համար գերիշխողը, անգամ՝ միակ մոտիվացիոն գործոնը:

Այլընտրանքային մոտեցումը հաճախ ներկայացվում է որպես «իդեալիզմ» կամ «արժեքային կողմնորոշմամբ» արտաքին քաղաքականություն: Նրա կողմնակիցների համար ամերիկյան արժեքներն ունիվերսալ են,

դրանք կարելի է տարածել կանխատեսելի մեխանիզմների օգնությամբ եւ, իբրեւ կանոն, ժամանակի վերջավոր հատվածում: Ռազմավարական հարցերն, ընդհանուր առմամբ, դիտարկվում են ներքաղաքական կառուցվածքների վերլուծության ճանապարհով: Նեոպահպանողական դպրոցին համապատասխան, այն հասարակությունների հետ, որտեղ ժողովրդավարությունն անկատար է, հարաբերություններն անխուսափելիորեն կլինեն թշնամական, սակայն դրանք, ժողովրդավարության ընդլայնմանը զուգընթաց, անպայման կբարելավվեն: Աշխարհաքաղաքական վերլուծությունը մերժվում է, քանզի դրա կողմնակիցները ելնում են նրանից, որ առանձին երկրներում դեռեւս գոյություն ունեն կառավարման ձեւեր, որոնք հեռու են կատարելությունից: «Իդեալիզմի» դպրոցի հետեւորդներն Ամերիկային կոչ են անում տարածել իր արժեքները՝ հովանավորելով հեղափոխությունները, իսկ եթե անհրաժեշտ է՝ նաեւ ռազմական ուժի օգնությամբ: Սակայն, ինչպես թվում է, այս երկու մոտեցումներից ոչ մեկը չի համապատասխանում Բյորկի չափանիշներին, որոնք ենթադրում են մարդկային փորձի ողջ բազմազանության եւ պետության կառավարման բարդությունների հաշվառում:

Նմանությունը բիլիարդի սեղանին հրապուրիչ է: Սակայն իրական արտաքին քաղաքականության մեջ «բիլիարդի գնդակները» հակադարձում են ոչ միայն ֆիզիկական ազդեցությամբ: Բիլիարդի գնդակների տակ հասկացվող դերակատարներն իրական կյանքում ղեկավարվում են նաեւ սեփական մշակութային ժառանգությամբ. պատմությամբ, բնագրով, իդեալներով, ռազմավարության նկատմամբ նրանց բնորոշ ազգային մոտեցմամբ, այսինքն՝ ազգային արժեքներով: Իսկական արտաքին քաղաքականությունը հզոր արժեհամակարգի կարիք ունի, որով ցանկացած՝ հաճախ երկիմաստ հանգամանքներում կարելի է ղեկավարվել: Նույնիսկ ռեալիզմի ամենավառ ներկայացուցիչ Բիսմարկը կարելուրել է իրատեսական պետականության սահմանային բարոյական հիմքը. *«Լավագույնը, որ կարող է անել պետական այրը, Աստծո քայլերը լսելն է, նրա թիկնոցի ծայրից բռնելը եւ նրա հետ մի քանի քայլ ճանապարհ անցնելը»:*

Նեոպահպանողականների դիրքորոշումը կառուցված է նրա վրա, որ համընդհանուր խաղաղության կարելի է հասնել ժողովրդավարական ինստիտուտների համակարգի ինժեներիայի միջոցով, իսկ եթե պատմությունը զարգանում է ոչ բավականաչափ արագ, այն կարելի է առաջ մղել ռազմական ուժով: Գործնականում այս վերջնական նպատակն այնքան հեռու է, իսկ դրան հասնելու միջոցն՝ այնքան անորոշ, որ ամեն ինչ հանգում է ինտերվենցիոնիզմի, որը հյուծում է մեր հասարակությունը եւ,

ի վերջո, հանգեցնում սկզբունքներից հրաժարման, ինչպես դա եղել է Վիետնամում, Իրաքում եւ Աֆղանստանում:

Տարբերությունը ոչ այնքան վերջնական նպատակների մեջ է, որքան նրանց կենսագործման արագության: Բանն այն չէ, թե գոյություն ունեցող կարգը չի կարելի փոխել, այլ որ դրա համար անհրաժեշտ ջանքերն առավել խելամիտ կլինեն, եթե հեռանկարի վրա կենտրոնացումը հմուտ կերպով համադրվի հանգամանքների բազմազանության եւ բարդության ընդունման հետ:

Մերծավոր Արեւելքի ներկայիս իրավիճակն ուսանելի է: «Արաբական գարունը» ողջունեցին խանդավառությամբ՝ իբրեւ տարածաշրջանային հեղափոխություն, որն իրականացնում է երիտասարդությունը եւ որը ղեկավարվում է ազատական-ժողովրդավարական սկզբունքներով: Բայց ինչպես գտնում էր Բյորկը, հեղափոխությունը հաջողված է սոսկ այն դեպքում, երբ մեկ հոսանքի մեջ են լցվում դժգոհության համար բազմաթիվ առիթները. հին վարչակարգի խորտակումն անխուսափելիորեն պայմանավորված է երկրում իշխանափոխության համար այդ դժգոհությունից պատրվակ գտնելու անհրաժեշտությամբ: Գործընթացը հաճախ ուղեկցվում է բռնությամբ եւ ամենեւին էլ ինքնաբերաբար չի ստեղծում քաղաքացիական հանդուրժողականության եւ մարդու անձնական իրավունքների ավանդույթ. լավագույն դեպքում խոսքը սոսկ դեպի նպատակը «ճանփորդության» սկզբի մասին է: Ամերիկյան կարող է եւ պետք է ապահովի օգնություն այդ «ճանփորդությանը»: Սակայն մեզ կպատուհասի անհաջողությունը, եթե ժողովրդավարական բարեփոխումների արդյունքը լինեն միակուսակցական ընտրությունները եւ մեկ կրոնի գերիշխանությունը:

Վիետնամում, Իրաքում եւ Աֆղանստանում հակամարտության պայմաններում քաղաքական համակարգերը ձեւափոխելու փորձերը հաճախ ձախողվել են, երբ Ամերիկայում հասարակական կարծիքը սկսել է կասկած արտահայտել ԱՄՆ գործողությունների շարունակության, ծախսերի եւ երկիմաստության վերաբերյալ: Այժմ Միացյալ Նահանգներն իր վրա է վերցրել Յյուս. Աֆրիկայի ու Մերծավոր Արեւելքի մյուս պետությունների ապագա էվոլյուցիայի բնույթի ձեւավորման մի շարք նոր պարտավորություններ: Ես կասկածի տակ չեմ դնում մեր ջանքերի անկեղծությունը կամ մեծահոգությունը: Սակայն մարդասիրության արժեքների տարածման փորձերը ոչնչի չեն հանգեցնի, եթե տեւական ժամանակով նրանց հնարավոր չլինի աջակցել: Որպեսզի ջանքերը կրեն կայուն բնույթ, դրանք պետք է ձեռնարկվեն՝ հաշվի առնելով Ամերիկայի այլ ավանդական ազգային շահերը եւ այն

գիտակցումը, թե պատրաստ է, արդյոք, ամերիկյան հասարակությունը տեւական ինտերվենցիաների:

«Արաբական գարնան» իրադարձությունների ծավալմանը զուգընթաց, ծագում են լուրջ հարցեր, որոնց պետք է պատասխան տալ: Մեզ մոտ կա՞, արդյոք, նախապատվություն, թե որ խմբավորումներն են գալու իշխանության: Թե՞ մենք չեզոք ենք, քանզի մեխանիզմները հիմնված են ընտրությունների վրա: Եթե դա այդպես է, ի՞նչ պիտի անել, որպեսզի չխրախուսել նոր աբսոլյուտիզմ, որը կառավարելի հանրաքվեների արդյունքում կդառնա լեգիտիմ: Իրադարձությունների ինչպիսի՞ ելքը կհամապատասխանի Ամերիկայի հիմնարար ռազմավարական շահերին: Յնարավո՞ր է, արդյոք, առանցքային երկրներից (ինչպիսիք են Իրաքը եւ Աֆղանստանը) ռազմավարական հեռանալը եւ ռազմական ծախսերի կրճատումը զուգորդել համընդհանուր մարդասիրական ինտերվենցիայի դոկտրինների հետ:

«Արաբական գարունը» չվերացրեց քաղաքական կյանքի ավանդական իրողությունները եւ հեղաշրջումներ վերապրած հասարակությունների ընդերքում մնացած առանձին խմբավորումները: Ուստի, ամենամեծ վստահությունը ներշնչում է այն մոտեցումը, որը ենթադրում է մեր ջանքերն ուղղել առավել էվոլյուցիոն՝ երբեմն հազիվ շոշափելի միջոցների վրա (քան այնպիսիների, որոնք անպատճառ կգոհացնեն YouTube-ի ու Twitter-ի սերնդին): Ամերիկյան արտաքին քաղաքականությունն այլ հասարակությունների ներքին հանգամանքներին ադապտացնելը չի նշանակում հրաժարվել սկզբունքներից:

Խոսքն, ի վերջո, համաշխարհային կարգի եւ մարդկության զարգացման սկզբունքների մասին է: Արմատական իրատեսական մոդելը ենթադրում է միջազգային հավասարակշռություն, որը պարբերաբար բարդանում է հակամարտություններով: Համաձայն դրա, Միացյալ Նահանգները չի կարող պատմության ընթացքն ուղղել մարդասիրության եւ ժողովրդավարության հունը, քանզի պատմությունը չի կարելի կառավարել, այն իրականանում է սեփական օրենքներով: Նեոպահպանողական մոդելը գալիս է փոխարինելու պատմության ժողովրդավարական թելոլոգիային. ըստ այդ մոդելի, Ամերիկայի վրա դրված է պարտականություն (եւ այն իր ուժերից վեր չէ)՝ ամեն կերպ խրախուսել հեղափոխությունները դիվանագիտական միջոցներով, ծայրահեղ դեպքում՝ ռազմական ուժի օգնությամբ:

Բյուրկի ոգով ամերիկյան պահպանողականությունը կարող է նշանակալից ավանդ ներդնել, եթե հաղթահարի պատմությանը վերաբերող հայացքներում ազատականության հետ հակասությունը: Այնպիսի

համաշխարհային կարգը, որի ժամանակ պետությունները միջազգային համագործակցությանը մասնակցում են համաձայնեցված կանոնների համապատասխան, հույս է ներշնչում եւ պետք է դառնա մեր ոգեւորության աղբյուր: Նման կարգի հաստատմանն ուղղված առաջ տանող շարժումը հնարավոր է ու ցանկալի: Սակայն պահանջվում է միջանկյալ փուլերի մի ամբողջ շարք: Ցանկացած կոնկրետ ժամանակահատվածում մենք ավելին ձեռք կբերենք, եթե, ինչպես գրել է Բյորկը, «լուռ համաձայնություն տանք վերացական գաղափարի մարմնավորման մի ինչ-որ սահմանափակ, քան այն լրիվ կատարելության հասցնող պլանի», կամ կբախվենք ձախողման եւ սկզբունքներից հրաժարման սպառնալիքին, եթե սեւեռվենք վերջնական արդյունքների անհապաղ ձեռքբերման վրա: Մենք կարիք ունենք այնպիսի ռազմավարության եւ դիվանագիտության, որոնք հաշվի կառնեն ենթադրյալ «ճամփորդության»՝ վեհանձն նպատակի բարդությունը, բայց նաեւ մարդկային ջանքերի անկատար բնույթը, որոնց միջոցով այդ նպատակը ձեռք կբերվի:

Սեփական գործողություններում միայն ուժի սկզբունքին ապավինելու փորձերը սնանկ կլինեն: Բայց եւ արժեքների առաջնությունը՝ առանց հաշվի առնելու մշակույթն ու բոլոր նրբությունները (ներառյալ այնպիսի գործոններ, ինչպիսիք են հանգամանքներն ու հնարավորությունները), կավարտվի հիասթափությամբ եւ սկզբունքներից հրաժարմամբ:

Իդեալիզմի եւ ռեալիզմի միջեւ տարբերությունները հակասում են պատմական փորձին: Իդեալիստների մոտ բարոյական արժեքների վրա մենաշնորհի չկա, ռեալիստներն էլ պետք է ընդունեն, որ իդեալները նույնպես իրականության մաս են: Հիասթափությունները կլինեն ավելի սակավ, եթե մենք ընտրություն կատարենք այն արտաքին քաղաքական ուղեգծի օգտին, որը նպատակաուղղված կլինի նրան, որպեսզի սեփական ակտիվում գրանցի ոչ այնքան վառ (գրեթե ապոկալիպտիկ) իրադարձություններ, որքան նրբերանգներ ու կիսաերանգներ. եւ մեր արժեքները երկարաժամկետ հեռանկարում կհաղթեն:

Այդպիսի արտաքին քաղաքականությունը պետք է կառուցվի մեր մշակութային ժառանգության գիտակցման վրա, որի պահպանումը սոցիալական ցանցերի եւ համացանցի դարում վիթխարի խնդիր է: Գրքերով դաստիարակված սերունդները ծանոթացել են այնպիսի հասկացությունների եւ բարդ գաղափարների հետ, որոնց վրա խորհել են իրենց նախորդները: Երբ կարելի է տեղեկատվություն ստանալ՝ նայելով համացանցը, առաջանում է նրա ավելցուկ՝ ընդունակ խոչընդոտելու գիտելիքների ձեռքբերմանը, եւ այն դադարում է հարգանք ներշնչել: Երբ

փաստերն առանձնացվում են համատեքստից եւ օգտագործվում ըստ անհրաժեշտության, կա պատմական հեռանկարի հետ կապը կորցնելու վտանգ: Ինչպես գրել է Բյորկը, *«ով հետադարձ հայացք չի գցում իր նախնիներին, չի մտածում սերունդների մասին»:*

Երբ ինքնության աղբյուր է դառնում կոնսենսուսը, որն առաջանում է սոցիալական ցանցերի էջերում պատահական «ընկերների» շրջանում քննարկումների ժամանակ, ընդհանուր կարող է հաղթել շատ կարեւորին: Խթան – հակազդեցություն տիպի պահվածքն ինքնին մթազնում է էության մասին մտորումները: Այս վտանգի հաղթահարումը, թերեւս, պահպանողականների՝ Բյորկի հետեւորդների համար ամենագլխավոր մշակութային խնդիրն է:

«Россия в глобальной политике»

N4 - 2012

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԸ.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆԴՈՒՆԴ
Ֆեոդոր Լուկյանով**

2001 թվականին Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Ահմեդ Դավութօղլուն հրատարակեց «Ռազմավարական խորություն. Թուրքիայի միջազգային դիրքերը» գիրքը, որտեղ առաջարկեց արտաքին քաղաքականության սկզբունքորեն նոր հայեցակարգ: 20-րդ դարի ողջ երկրորդ կեսին Անկարան ղեկավարվում էր դրույթների պարզ հավաքածուով. Թուրքիան ՆԱՏՕ լոյալ անդամ էր եւ քաղաքական Արեւմուտքի մաս, որը հակադրվում էր քաղաքական Արեւելքին՝ դրանից բխող բոլոր սահմանափակումներով եւ պարտավորություններով: Դա, բնականաբար, չի տվել գործողությունների ազատություն, փոխարենը ապահովել է ինչպես անվտանգության ամերիկյան երաշխիքը, այնպես էլ այլ քաղաքական եւ տնտեսական դիվիդենտներ արեւմտյան համակարգի շրջանակներում: Առավել եւս, որ Թուրքիան ոչ միայն պարզապես դաշնակիցներից մեկն էր, այլեւ դաշինքի հարավային թեւի հենակետային երկիր եւ բանակի թվաքանակով երկրորդը դաշինքում:

ԽՍՀՄ անհետացումը նվազեցրեց երաշխիքների նշանակությունը, փոխարենը իրադարձությունները թուրքական սահմանների երկայնքով սկսեցին շատ բուռն կերպով զարգանալ: Հայտնվեցին նոր՝ այդ թվում Թուրքիային էթնիկապես եւ մշակույթով ազգակից պետություններ: Սկսեց կիրառվել լուրջ ռազմական ուժ (սկսած 1991թ. «Փոթորիկ անապատում»-ից եւ հետո): Բալկաններում որոտաց պատերազմների մի ամբողջ շարք: Սկսվեց Եվրամիության սրընթաց վերելքը՝ փոխարինելով մի ինչ-որ պահին նրա անկմանը: Արաբական աշխարհը շարժման մեջ մտավ՝ ոչ այնքան նկատելի 20-րդ դարի վերջին, սակայն ավելի ու ավելի ակնհայտ 21-րդ դարի սկզբին: Դավութօղլուի «Ռազմավարական խորություն»-ը ենթադրում էր այն պլանը, թե Թուրքիան ինչպես պետք է արձագանքի այս բոլոր փոփոխություններին:

Հեղինակը ելնում էր նրանից, որ համաշխարհային քաղաքականության մեջ ցանկացած երկրի կարեւորություն որոշվում է նրա գեոստրատեգիական դիրքով եւ «պատմական խորությունով»: Այս տեսակետից Թուրքիան գործնականորեն բացառիկ է՝ շնորհիվ միանգամից մի քանի կարեւորագույն տարածաշրջանների եւ ավանդույթների խաչմերուկում

ունեցած դիրքի, որը ժառանգել է Օսմանյան կայսրությունից: Վերջինս առանձնապես էական է, քանզի օսմանները մի ժամանակ գործնականում միավորել են ողջ մուսուլմանական աշխարհը, ինչը ներկայիս թուրքիան պոտենցիալ կերպով դարձնում է «մուսուլմանական գերտերություն»: Տիրապետելով տարբեր պարամետրերի կոմբինացիաների՝ երկիրն, «ըստ իր նշանակության, չի կարող լինել ծայրամաս, ԵՄ եւ ՆԱՏՕ երկրորդական անդամ կամ պարզապես Ասիայի մաս»:

Դրանից հետեւություն է արվում, որ, առաջին՝ թուրքիան դատապարտված է միջազգային հարաբերություններում լինելու կենտրոնական տեղում, երկրորդ՝ նրան հարկավոր է նվազեցնել կախվածությունն Արեւմուտքից եւ արեւմտյան կազմակերպություններից՝ ոչ արեւմտյան կարեւոր երկրների հետ հարաբերությունների կառուցման հաշվին. նախկինում ոչ բարեկամ Ռուսաստանից եւ Իրանից մինչեւ Չինաստան ու Հնդկաստան եւ Հարավային ու Արեւելյան Ասիայի այլ զարգացող տերություններ:

Ահմեդ Դավութօղլուի հայեցակարգն ուժեղ տպավորություն գործեց Արդարություն եւ զարգացում կուսակցության ղեկավարության վրա, որն իշխանության եկավ գրքի հրատարակումից մեկ տարի անց: Հեղինակը դարձավ Ռեջեփ Թայիփ Էրդողանի խորհրդական, հետո դեսպան, որին հանձնարարվեցին ամենանուրբ առաքելությունները, եւ, ի վերջո, 2009թ.՝ արտաքին գործերի նախարար: Իրադարձությունների զարգացումը տարածաշրջանում եւ աշխարհում, թվում էր, հաստատեց Դավութօղլուի իրավացիությունը: Արեւմտյան ինստիտուտները սասանվեցին. ՆԱՏՕ-ն, որի հավատարիմ ծառան է միշտ եղել Անկարան, թափառում էր առաքելության փնտրտուքի մեջ, Եվրամիությունը, ուր թուրքիային չէին ձգտում ընդունել, ավելի էր թաղվում սրացող ճգնաժամի մեջ: ԱՄՆ-ը խճճվել էր իր համար ակնհայտ տանուլ տրվող իրավիճակում Մեծ Մերձավոր Արեւելքի տարբեր մասերում՝ Պաղեստինից մինչեւ Աֆղանստան: Իրադրությունը նպաստում էր Անկարայի ինքնուրույն ակտիվության ավելացմանը եւ նրա միջազգային կարգավիճակի բարձրացմանը:

Թուրքիայի «խաղաղ վերելքի» ձգտման գազաթնակետը եղավ նախարարական պաշտոն ստանալու հետ Դավութօղլուի կողմից առաջ քաշված «գրո խնդիր հարեւանների հետ» դոկտրինը: Նկատի էր առնվում, որ Անկարան տարածաշրջանում առաջատար դիրքեր է գրավելու բացառապես կառուցողականության հաշվին:

Հակամարտությունների եւ վեճերի կարգավորում, ուր որ նրանք կան (օրինակ՝ Հայաստանի կամ Իրանի հետ): Առեւտրատնտեսական կապերի կտրուկ ավելացում, ուր որ այն հնարավոր է (օրինակ՝ Ռուսաստանի հետ):

Ձարգացման սեփական մոդելի առաջարկում նրանց, ում այն կարող է հետաքրքրել (արաբական երկրներին): Մշակութատնտեսական խնամակալություն (Բալկաններ): Նման ծրագիրը շատերին չափից ավելի լուսաշող թվաց: Այնուամենայնիվ, սկզբում այն տպավորությունն էր, թե առաջընթաց հնարավոր է. Թուրքիան զարգացել էր շատ արագ, մյուսները լճացում էին ապրել, եւ Անկարայի կերպարն՝ իբրեւ առաջադիմող խաղացողի, ինքնին ապահովում էր առավելություն:

Սակայն բոլոր ազիմուտներով գերակտիվ պահվածքի փորձն անմիջապես սկսեց բախվել անհաղթահարելի դժվարությունների: Առավել բնութագրական էր Հայաստանի հետ հաշտեցման գործընթացը, ինչը հարուցեց Ադրբեջանի այնքան բացասական արձագանքը, որ անգամ համառ էր դողանը ստիպված եղավ նահանջել: Բայց եւ «արաբական գարունը», իր բոլոր հակասական բաղադրիչներով հանդերձ, ակնառու կերպով ցուցադրեց, որ Թուրքիան ի վիճակի չէ ներդաշնակեցնել հակադիր շահերը տարբեր ուղղություններում:

«Ջրո խնդիր» քաղաքականության արդյունքը պարադոքսային է. այսօր Թուրքիան, թերեւս, չունի հարեւաններ, որոնց հետ հարաբերությունները կարելի լինի միանշանակորեն դրական անվանել:

Արաբական աշխարհն Անկարայի խնամակալությունից կամ նրա մոդելի փոխառումից հրաժարվեց, ավելի ճիշտ՝ շուտով պարզվեց, որ այն կիրառելի չէ այնտեղ: Բաշար Ասադի ռեժիմի արագ տապալման հաշվարկը եւ նոր Սիրիայում կարգադրիչի դեր խաղալու Թուրքիայի հեռանկարը չարդարացվեցին: Իրանի հետ հարաբերությունները, որոնք էրդողանին մինչ այդ հաջողվել էր զգալիորեն բարելավել, Սիրիայի պատճառով կտրուկ վատթարացան: Իսկ այժմ, ինքնաթիռի հետ կապված միջադեպից հետո, սիրիական բախումները վատ անդրադարձան նաեւ Ռուսաստանի հետ կապերի վրա, թեւ մինչեւ վերջին ժամանակները Մոսկվային եւ Անկարային հաջողվում էր կոնֆլիկտային թեման առանձնացնել հարաբերությունների հիմնական զանգվածից:

Ուշագրավ է, որ ՆԱՏՕ-ական ճակատում էլ ամեն ինչ հստակ չէ: Ներքաշվելով տարածաշրջանում շատ բարդ շահերի բախման մեջ՝ Թուրքիան հիշեց իր դաշնակիցներին. նրանց աջակցությունը կրկին կարելի էր վերականգնել: Առավել եւս, որ Ասադի հարցում Անկարայի եւ արեւմտյան մայրաքաղաքների դիրքորոշումները համընկնում են: Շատ մեկնաբաններ նույնիսկ ենթադրեցին, որ ՆԱՏՕ-ն կարող է թուրք-սիրիական հակասություններն օգտագործել որպես առիթ Սիրիայում ուղղակի միջամտության համար: Սակայն, երեւում է, որ հենց նման մտադրություն չկա: Ո՛չ թուրքական խփված կործանիչը, ո՛չ սահմանային միջադեպերի ծավալումը,

չստիպեցին դաշինքին ոչինչ ձեռնարկել. խոսքերով Թուրքիային բարձրաձայն համերաշխություն հայտնելով՝ ՆԱՏՕ-ն մատն իսկ չչարժեց, որպեսզի նրան ցուցաբերի գործնական աջակցություն: Այնպիսի տպավորություն է, որ դաշինքում հասկանում են՝ Անկարայի եւ Դամասկոսի միջեւ հարաբերությունները կրում են շատ ուրույն, տեղային բովանդակություն, եւ մեծ արտաքին ուժերի միջամտությունն ամեն ինչ ավելի կխճճի:

Իրոք, բացառիկ տարածաշրջանային դերին Թուրքիայի ձգտումը սպառնում է հանգեցնել ծայրահեղ տհաճ ներքին հետեւանքների: Դամասկոսի վարչակարգի թուլացմանը զուգընթաց, թուրքական սահմանամերձ գոտիներում էլ ավելի ակտիվ դեր են խաղում քրդական կազմակերպությունները եւ, նախեւառաջ, Քուրդիստանի բանվորական կուսակցությունը՝ Անկարայի երդվյալ թշնամին շատ տասնամյակներ շարունակ: Վերջին տարիներին Թուրքիային հաջողվեց շատ բան անել լարվածության թուլացման համար՝ կապված քրդերի հետ. ռազմաոստիկանական գործողությունների եւ Աբդուլա Օջալանի ձերբակալության զուգակցումը բարեփոխումների հետ՝ ուղղված քրդերի նկատմամբ խտրականության վերացմանը, տվեցին պտուղներ: Սակայն ամեն ինչ սպառնում է ապարդյուն անցնել. քիչ է, որ Իրաքի կողմից թուրքական սահմանին հայտնվել է դե-ֆակտո անկախ քրդական քվազիպետություն, այժմ նման մի բան կարող է առաջանալ նաեւ սիրիական տարածքում: Ընդ որում, ըստ հասարակական կարծիքի բոլոր հարցումների, Թուրքիայի քաղաքացիների ճնշող մեծամասնությունը դեմ է Սիրիայում ռազմական միջամտությանը, թեեւ կառավարությանը շուտով կարող է ընտրություն չմնալ:

Այսօր շատերը Դավութօղլուին նախատում են, որ հռչակելով հավակնոտ ուղեգիծ՝ նա չկարողացավ այն ճիշտ հաշվարկել եւ խիստ գերազնահատեց երկրի հնարավորությունները: Ամենատհաճն այն է, որ վերադարձը նախկին արտաքին քաղաքական ուղեգծին հնարավոր չէ. բոլոր պայմանները չափազանց փոխվել են:

Ռազմավարական խորությունը, այս դեպքում, կարող է վերածվել ռազմավարական անդունդի:

Gazeta.Ru

18.10.2012

**ՍԻՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ.
ԳԼՈՐԱԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԻԶԱԿԵՏ
Գազիկ Տեր-Հարությունյան**

«Արաբական գարնան» համատեքստում՝ Սիրիայում ընթացող ռազմական գործողությունները հայրենական տեղեկատվական լրահոսում հիմնականում մեկնաբանվում են հայկական համայնքների անվտանգության տեսանկյունից: Անշուշտ, այդ հարցն այսօր ամենահրատապն է, եւ համայնքների ապահովությունը մեր ազգային անվտանգության կարեւորագույն խնդիրներից է:

Այդ առիթով կարելի է արձանագրել, որ, ի տարբերություն 2003թ., երբ ԱՄՆ-ի կողմից Իրաքի օկուպացման արդյունքում տեղի հայկական համայնքը, փաստորեն, տրոհվեց, այսօրվա Հայաստանը ձգտում է հնարավորինս աջակցել բարդ իրադրության մեջ հայտնված սիրիահայերին. շուրջ 5000 հայրենակիցներ տեղափոխվել են Հայաստան, հնարավորինս ապահովվել են անհրաժեշտ պայմաններով, կազմակերպվել է նաեւ դպրոցականների ուսուցումը:

Միեւնույն ժամանակ, այնպիսի հեռուստակայաններ, ինչպիսիք են, մասնավորապես, CNN-ը, Euronews-ը, BBC-ն, RBC-ն, որպես կանոն, միակողմանի են ներկայացնում արաբական արդի իրողությունները՝ դրանք մեկնաբանելով որպես այս կամ այն արաբական երկրի բացառապես ներքաղաքական հանգամանքներով պայմանավորված հեղափոխական իրադարձություններ:

Մասնավորապես, Սիրիայում տիրող բարդ իրավիճակը ներկայացվում է որպես հակամարտություն կառավարական ուժերի (որոնց մեղադրում են խաղաղ բնակչության դեմ բռնություններ կատարելու մեջ) եւ «ազատության համար պայքարող» ընդդիմության միջեւ: Մինչդեռ այդ երկրում ընթացող զարգացումներում ներքաշված են ոչ միայն տարածաշրջանային, այլեւ խոշոր աշխարհաքաղաքական դերակատարները: Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ սիրիական թվացյալ լոկալ պատերազմն իրականում գլոբալ հակամարտության կիզակետ է:

Պատերազմի դրդապատճառները

Ներկայիս Մերձավոր Արեւելքի կառուցվածքը, ըստ այն ձեւավորող աշխարհաքաղաքական ճարտարապետների մտահղացման, ի թիվս այլ հարցերի, պետք է բավարարի մի գլխավոր նախապայման. այդ տարածաշրջանում չպետք է լինեն պետական-քաղաքական կամքի կենտրոններ, որոնք սկզբունքորեն կարող են վտանգել ԱՄՆ եւ նրա դաշնակից Իսրայելի քաղաքական կամ տնտեսական շահերը: Պետք է ամրագրել, որ այդ ծրագիրը հետեւողականորեն իրագործվում է. դրա մասին են վկայում, մասնավորապես, Իրաքի եւ Լիբիայի նախադեպերը, որտեղ վարչախմբերի փոփոխության համար պահանջվեց առավելագույնը մի քանի ամիս: Սակայն իրագործվող ռազմավարության համատեքստում տարածաշրջանի գլխավոր ընդդիմադիր դերակատարները՝ Իրանը եւ նրա դաշնակից Սիրիան, չնայած առաջինի նկատմամբ կիրառվող բազմաթիվ պատժամիջոցներին, իսկ Սիրիային փաստացի հայտարարած պատերազմին, դեռեւս կարողանում են պահպանել ինքնիշխանությունը եւ իրենց հատուկ ազգային-պետական համակարգը:

Անշուշտ, ստեղծված իրավիճակն արդյունք է ոչ միայն այդ երկու երկրների իշխանությունների եւ հանրությունների կամային հատկանիշների, ռեսուրսների եւ համակարգված քաղաքականության: Այստեղ կարեւորագույն նշանակություն ունի այն, որ Իրանին եւ Սիրիային այս հակամարտությունում սատարում են աշխարհաքաղաքական ծանր-քաշայիններ Ռուսաստանը եւ Չինաստանը: Կարելի է ամրագրել, որ, թերեւս, առաջին անգամ Սառը պատերազմից հետո ընդհանրական Արեւմուտքին ցույց է տրվում ինչ-որ չափով համակարգված դիմադրություն: Անշուշտ, դեռեւս վաղ է խոսել պայմանական Արեւմուտք-Արեւելք գլոբալ հակամարտության մասին, սակայն սիրիական պատերազմում ներկայիս միտումների սաստկացման պարագայում նշարվում են նման սցենարի հնարավորությունները: Սակայն վերադառնալով սիրիական իրողություններին:

Հակամարտող կողմերը

Արեւմտյան լրատվամիջոցներում որպես ընդդիմություն ներկայացվող այսպես կոչված Սիրիական ազատ բանակը (ՍԱԲ) հիմնականում կազմված է տարբեր երկրներից (այդ թվում՝ նաեւ Ադրբեջանից) Սիրիա

ներթափանցած վարձկաններից, որոնց մի մասն իսլամական ահաբեկչական կառույցների անդամներ են: Նման խայտաբղետ կազմ ունեցող ՍԱԲ-ը, բնականորեն, հեռու է կուռ, միասնական կազմակերպություն լինելուց: Նույնը կարելի է ասել նաեւ ընդդիմության քաղաքական մարմնի՝ Սիրիական ազգային խորհրդի վերաբերյալ: Միեւնույն ժամանակ, ապակենտրոնացված լինելը վարձկաններին որոշակի մարտավարական առավելություններ է տալիս, քանի որ նրանց գործողությունները դարձնում է առավել անկանխատեսելի: Ի լրումն՝ ՍԱԲ շարքերում գտնվող իսլամական ծայրահեղականներն իրագործում են նաեւ ինքնապայթեցումներ. հայտնի է, որ ահաբեկչության այդ ձեւի դեմ, մասնավորապես սիրիական պայմաններում, գրեթե անհնար է արդյունավետ պայքարել:

Ձինյալների թվաքանակը տարբեր աղբյուրներ գնահատում են մինչեւ 70 հազար: Նրանց ֆինանսավորումը եւ զինամթերքով ապահովումն իրականացվում են գլխավորապես Սաուդյան Արաբիայի եւ Կատարի նյութական միջոցների հաշվին: Վարձկանները հետախուզական, ռազմական եւ այլ բնույթի աջակցություն են ստանում նաեւ ՆԱՏՕ անդամ երկրների հատուկ ծառայություններից:

Հակակառավարական ուժերին առանձնապես մեծ աջակցություն է ցուցաբերում Թուրքիան, որի տարածքում, մինչեւ Սիրիա ներթափանցելը, զինվորական պատրաստություն է ստանում վարձկանների զգալի մասը: Թուրքական զինուժը փաստացի մասնակցում է Սիրիայում ընթացող ռազմական գործողություններին, եւ դա արտահայտվում է ոչ միայն հետախուզական թռիչքներով ու սիրիական տարածքի հրետակոծումներով. բավական է նշել, որ Հալեպում գործող շուրջ 12 հազար վարձկաններին ղեկավարում էին թուրքական սպաները: Կա թուրքական աղբյուրներով հաստատված տեղեկատվություն, որ Սիրիայում գերեվարվել են թուրք գեներալ ու շուրջ 30 ռազմական խորհրդական:

Որոշ վերլուծաբաններ հակված են կարծելու, թե Թուրքիան կարող է լայնամասշտաբ ներխուժում կազմակերպել Սիրիա, եւ այդ կարծիքն ամրապնդվեց թուրքական մեջլիսի կողմից նման պատերազմական գործողությամբ հավանություն տալուց հետո: Սակայն այդ քայլը կապված է բազմաթիվ միջազգային, ներքաղաքական եւ, հաշվի առնելով սիրիական բանակի բավական բարձր պատրաստվածությունը, նաեւ ռազմական բարդությունների հետ: Ներկայում Սիրիայի դեմ վարվող այսպես կոչված «հյուծման ռազմավարությունը», անշուշտ,

ավելի արդյունավետ է, քան ուղղակի ներխուժումը: Միեւնույն ժամանակ, թուրքական հարձակումը Սիրիայի վրա չի կարելի բացառել. այն հնարավոր է ԱՄՆ – ՆԱՏՕ կոլեկտիվ ռազմական գործողությունների համատեքստում:

ՍԱԲ-ին դիմակայող սիրիական կառավարական բանակը նույնպես միայնակ չի գործում: Համաձայն բազմաթիվ հաղորդագրությունների՝ Բաշար Ասադի վարչակազմին ռազմական եւ նյութական աջակցություն է ցուցաբերում Իրանը: Ըստ որոշ լրատվամիջոցների՝ այդ երկրի հատուկ ստորաբաժանումների զինյալներն անմիջականորեն մասնակցում են պատերազմական գործողություններին: Իրանն իրավամբ սիրիական պատերազմում հանդիսանում է հակամարտող կողմ: Կան նաեւ չհաստատված լուրեր ռուսաստանյան զինվորական խորհրդատուների ներկայության մասին: Կառավարական ուժերին ռազմական տեխնիկա եւ զինամթերք մատակարարում են գլխավորապես Ռուսաստանը, մասամբ՝ Չինաստանը, նշվում է նաեւ Գյուսիսային Կորեան, որի հետ Ասադի վարչակազմն ավանդական կապեր է պահպանում: Սիրիան աջակցություն է ստանում նաեւ Իրաքի շիական կառավարությունից եւ լիբանանյան «Հիզբալլահից»: Միաժամանակ, Սիրիայում եւ առանձնապես Թուրքիայում ակտիվացել են քրդական խմբավորումները, որոնց գործողություններն այս պահին նպաստավոր են սիրիական կառավարության համար:

Հնարավոր զարգացումները

Ինչպես հետեւում է լրատվական հոսքերից, Իրանը եւ Ռուսաստանը բանակցային տարբեր ձեւաչափերում պարբերաբար փորձեր են կատարում գտնել հակամարտությունը դադարեցնելու ուղիներ, որոնցում դիտարկվում է անգամ Ասադին իշխանազրկելն ու անցումային կառավարության ձեւավորումը: Սակայն Արեւմուտքը եւ նրա տարածաշրջանային դաշնակիցները կարծում են, որ ժամանակն աշխատում է իրենց օգտին, չեն արձագանքում այդ փորձերին եւ անընդունելի են համարում Սիրիայում վերահսկվող իշխանափոխությունը: Նկատենք, որ զուտ ռազմական առումով Սիրիայում ստեղծվել է յուրահատուկ դիմամիկ հավասարակշռություն. կառավարական զորքերը, կիրառելով ավիացիա, զրահատեխնիկա եւ հրետանի, կոնկրետ տեղամասերում կարողանում են ճնշել հակառակորդին, սակայն, դրան զուգահեռ, երկիր են ներթափանցում արդիական հակաօդային եւ հակատանկային

համալիրներով զինված նորանոր զինյալ խմբավորումներ, որոնք ընդլայնում են հարձակումների աշխարհագրությունը եւ թիրախները: Թվում է, որ եթե պահպանվեն ներկայիս միտումները եւ չծագեն նոր, անսպասելի հանգամանքներ, ապա նման պատերազմը կարող է տևել բավական երկար:

Սակայն, «տաք պատերազմին» զուգահեռ, Սիրիայի եւ Իրանի դեմ վարվում է նաև «սառը պատերազմ»՝ տնտեսական պատժամիջոցների ու տեղեկատվական-հոգեբանական գործողությունների (որոնցում խիստ ակտիվ է Կատարի «Ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը) տեսքով, որոնց նպատակն է քայքայել այդ երկրների պետական եւ սոցիալ-տնտեսական հենքը: Արդյունքում՝ Իրանը եւ Սիրիան բախվում են լուրջ հիմնախնդիրների հատկապես տնտեսական ոլորտում (սակայն խոսել, մասնավորապես, իրանական բավական ճկուն տնտեսության կազմալուծման մասին՝ դեռևս վաղ է): Այս բոլոր հանգամանքների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, որը տեսում է արդեն մոտ 2 տարի, եւ որը հանգուցալուծման կարիք ունի:

Որպես զարգացման հնարավոր սցենար կարելի է դիտարկել ԱՄՆ գլխավորությամբ ՆԱՏՕ ուժերի ռազմական ինտերվենցիան: Այս պարագայում՝ հրթիռային եւ օդային հարվածներից հետո սիրիական կառավարական ուժերը, թերեւս, կկորցնեն իրենց առավելությունը վարձկանների հանդեպ, եւ վերջիններս, հնարավոր է՝ թուրքական բանակի աջակցությամբ, կգրավեն Դամասկոսը: Նկատենք, սակայն, որ ՄԱԿ որոշումները շրջանցող նման սցենարն ուղղակի մարտահրավեր է Չինաստանին եւ Ռուսաստանին ու կարող է հրահրել այդ տերությունների ռազմաքաղաքական մերձեցումն «ընդհանուր թշնամու» դեմ:

Նման սցենարի դեպքում, թերեւս, ավելի էական է Իրանի անմիջական արձագանքը, որն ընդունելու է ինտերվենցիան որպես անխուսափելի պատերազմի սկիզբ սեփական երկրի դեմ: Դա կարող է հանգեցնել նրան, որ պայքարը Դամասկոսի հնարավոր նոր իշխանությունների դեմ կարող է տարվել նույն այն դեղատոմսերով, համաձայն որոնց՝ ներկա վարձկանները պայքարում են Ասադի դեմ, իսկ պատերազմական գործողությունները կտարածվեն ողջ տարածաշրջանում: Բացառված չէ, որ երկուստեք գործողությունների արդյունքում ձեւավորվի մի իրավիճակ (եթե, օրինակ, փակվի Զորմուզի նեղուցը, որով տեղափոխվում է համաշխարհային նավթի մինչեւ 30-40%-ը), երբ ԱՄՆ/Իսրայել-Իրան «տաք» հակամարտությունը դառնա անխուսափելի:

Նման սցենարը լրջագույն մարտահրավեր է Հայաստանի համար եւ ոչ միայն պատերազմի անմիջական հետեւանքների առումով: Վերոնշյալ զարգացումները կարող են հանգեցնել տարածաշրջանում ուժերի հավասարակշռության խախտմանը եւ Թուրքիայի գերիշխանության հաստատմանը: Կասկած չի հարուցում, որ ԼՂՀ խնդրում անգիջում դիրք գրաված եւ մեր սահմանների շրջափակումն իրականացնող Թուրքիայի հզորացումն անխուսափելիորեն ավելի է կոշտացնելու Հայաստանի հանդեպ նրա դիրքորոշումները:

Հատկանշական է, որ արդեն այսօր թուրքական որոշ գործիչներ կոչ են անում ստեղծել Իսլամական ՆԱՏՕ եւ Իսլամական խաղաղարար ուժեր՝ այդպիսով վերակենդանացնելով Էրդողանի գաղափարական հայր, նախկին վարչապետ Էրբաքանի ծրագրերը: Այդ նույն համատեքստում պետք է ընկալել նաեւ Էրդողանի հայտարարությունը «թուրքական լիրայի գոտի» ստեղծելու վերաբերյալ: Առանձնահատուկ ուշադրության են արժանի նաեւ այդ երկրի միջուկային հավակնոտ ծրագրերը:

Ակնհայտ է, որ անգամ նման տեսական սցենարի հնարավորությունն իր անկանխատեսելի հետեւանքներով չի կարող «հրապուրել» ոչ միայն տարածաշրջանի երկրներին, այլեւ ներկայիս գլխավոր աշխարհաքաղաքական խաղացողին՝ Միացյալ Նահանգներին: Ստեղծված իրողությունները թելադրում են փնտրել նաեւ «խաղաղության» տարբերակներ եւ սցենարներ: Թերեւս, այս տեսանկյունից պետք է ընկալել ամերիկյան հեղինակավոր Արտաքին հարաբերությունների խորհրդի Foreign Affairs ամսագրում տպագրված Քենեթ Ուոլթցի հոդվածը, որի հիմնական թեզն այն է, որ եթե Իրանը տիրապետի սահմանափակ քանակությամբ միջուկային զենքի, ապա դա կնպաստի տարածաշրջանում կայունության հաստատմանը: Նման մտքեր են արտահայտվում նաեւ Արտաքին հարաբերությունների խորհրդի նախագահ Ռիչարդ Հասսի՝ նույն ամսագրում լույս տեսած հոդվածում: Այս ամենի համատեքստում պատահական չպետք է համարել, որ ամերիկյան մամուլում հայտնվեցին հաղորդագրություններ, թե ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ ընթացել են անմիջական բանակցություններ: Այդ տեղեկատվությունը երկու կողմերն էլ հերքեցին, սակայն ոչ այնքան համոզիչ կերպով, ինչը թույլ է տալիս կարծել, որ ընդհանուր եզրեր գտնելու եւ փոխզիջումներ կատարելու որոշակի փորձեր, այնուամենայնիվ, կատարվում են:

Անշուշտ, բանակցությունները դեռեւս խաղաղության երաշխիք չեն. նույն ժամանակահատվածում ԱՄՆ-ը եւ Իսրայելը համատեղ հակա-օդային եւ հակահրթիռային զինավարժություններ սկսեցին անցկացնել, իսկ Իրանի զինվորական շրջանակներից հնչեցին կոշտ եւ անզիջում հայտարարություններ, ինչը, իհարկե, կարելի է մեկնաբանել նաեւ որպես վարվող բանակցություններում (վերջիններիս առկայության պարագայում) սեփական դիրքերի ամրացում:

Նկատենք սակայն, որ ԱՄՆ/Իսրայել–Իրան հարաբերությունների հնարավոր բարելավումը դեռեւս բավարար պայման չէ սիրիական պատերազմը խաղաղությամբ հանգուցալուծելու համար: Թուրքիան, Սաուդյան Արաբիան եւ Կատարը ներկա պայմաններում միշտ չէ, որ հակված են հնազանդվելու ամերիկյան թելադրանքներին եւ պատերազմական գործողությունները դադարեցնելու կոչերին:

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ
ԹՈՒՐՔ-ԻՐԱՔՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
Հայկ Գաբրիելյան

Վերջին շրջանում բավական սրվել են թուրք-իրաքյան հարաբերությունները, ինչում իր ուրույն դերն ունի քրդական գործոնը: Բուն քրդական գործոնին անդրադառնալուց առաջ հարկ է ընդհանուր հայացք ձգել թուրք-իրաքյան հարաբերություններում ստեղծված իրավիճակին եւ մասնավորապես նրանց միջեւ առկա տարածայնություններին, որոնք այնքան էլ կապված չեն քրդական գործոնի հետ:

Թուրքիա – Իրաք

Իրաքի վարչապետ, շիա Նուրի ալ-Մալիքին այս տարի շարունակ դատապարտում է տարածաշրջանում սեփական գերիշխանությունը հաստատելուն ուղղված Թուրքիայի փորձերը՝ ընդգծելով, որ հարեւանների գործերին միջամտելու ցանկությունը Թուրքիային վերածում է տարածաշրջանի բոլոր երկրների թշնամու: Մալիքին Թուրքիային մեղադրում է նաեւ Իրաքում սուեցիաների ու շիաների միջեւ թշնամություն սերմանելու մեջ:

Թուրք-իրաքյան հարաբերությունների վրա իր բացասական կնիքն է թողնում նաեւ այն, որ Թուրքիան ապաստան է տվել եւ հրաժարվում է Իրաքին հանձնել այդ երկրի փոխնախագահ, սուեցի Թարիք ալ-Հաշիմիին, որին իրաքյան դատարանը երեք անգամ դատապարտել է մահապատժի՝ մեղավոր ճանաչելով ավելի քան 300 հանցագործությունների մեջ: Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանն այդ կապակցությամբ շարունակ հայտարարում է, որ Թարիք ալ-Հաշիմին բուժում է ստանում Թուրքիայում եւ կարող է Թուրքիայում մնալ այնքան, որքան որ կցանկանա:

Թուրք-իրաքյան հարաբերությունները շատ ավելի սրվեցին, երբ Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն օգոստոսի սկզբին Յյուսիսային Իրաք կատարած իր այցի շրջանակներում անսպասելիորեն այցելեց նաեւ Քիրքուկ: Դավութօղլուն նախ Էրբիլում հանդիպեց Քրդական ինքնավարության առաջնորդ Մասուդ Բարզանիի հետ եւ հիմնականում քննարկեց Սիրիայի հարցը՝ Բարզանիին փոխանցելով թուրքական

կողմի մտահոգությունները՝ կապված Սիրիայի հյուսիսում քրդական Դեմոկրատական միություն կուսակցության (PYD) ամրապնդման հետ, որը վերջին 30 տարիներին Թուրքիայի դեմ պատերազմ մղող Քրդստանի աշխատավորական կուսակցության (PKK) դաշնակիցն է:

Այդ հանդիպումից հետո Դավութօղլուն այցելեց Էրբիլից 83 կիլոմետր դեպի հարավ ընկած Քիրքուկ, որը հիմնականում բնակեցված է Անկարայի հանդեպ բարյացակամ տրամադրված իրաքյան թուրքմեններով, որոնց Դավութօղլուն անվանեց եղբայրներ: Թուրքական մամուլն անմիջապես Դավութօղլուի այս այցը որակեց պատմական՝ ընդգծելով, որ Դավութօղլուն երկար ժամանակ էր պատրաստվել դրան, եւ հիշեցնելով, որ վերջին անգամ թուրք պետական գործիչը Քիրքուկ է այցելել 75 տարի առաջ:

Դավութօղլուի քիրքուկյան այցը հարուցեց Իրաքի ԱԳՆ խիստ արձագանքը, քանի որ այն իրականացվել էր առանց պաշտոնական Բաղդադին իրազեկելու: Նուրի ալ-Մալիքիի խորհրդականն իր հերթին հայտարարեց, որ Թուրքիան շատ բաց միջամտում է Իրաքի գործերին. «Պետք է փակել Իրաքում Թուրքիայի դեսպանատունը: Մենք իրավունք ունենք կալանավորելու Դավութօղլուին: Դավութօղլուն պետք է լավ իմանար, որ այդպիսի այց կատարելու համար անհրաժեշտ է օգտվել պետական ու դիվանագիտական աղբյուրներից»: Դավութօղլուին 24 ժամ տրվեց երկրի տարածքը լքելու համար:

Ապա Իրաքի կառավարության խոսնակ Ալի Դաբաղը հայտարարեց, որ Իրաքի Նախարարների խորհրդի նիստում որոշվել է վերանայել Թուրքիայի հետ հարաբերությունները, փոխվարչապետ Յուսեֆին Շահրիսթանիի գլխավորությամբ ստեղծել հատուկ հանձնաժողով, որը կհետազոտի Դավութօղլուի այդ այցի ազդեցությունն Իրաքում առկա իրավիճակի վրա: Իրաքյան կողմի կարծիքով՝ պաշտոնական Անկարայի վերջնական նպատակն Իրաքի մասնատումն ու ոչնչացումն է:

Չոկտեմբերի կեսերին Դավութօղլուի նման Իրաքի կենտրոնական իշխանություններին անտեսեցին արդեն թուրք ուխտագնացները: Դրա հետեւանքով Իրաքի անվտանգության ուժերը ձերբակալեցին ավտոբուսներով Սաուդյան Արաբիա ուղեւորվող 1200 թուրք ուխտավորների, որոնք մուտքի վիզա էին ստացել Յուսիսային Իրաքի քրդական ինքնավարությունից եւ ոչ թե Իրաքի կենտրոնական իշխանություններից:

Սեպտեմբերի վերջին Ռեջեփ Էրդողանը, որը շարունակ Մալիքիին մեղադրում է իշխանության մոնոպոլացման ու եսակենտրոնության մեջ, անսպասելիորեն նրան հրավիրեց այցելել Թուրքիա, սակայն Մալիքին մերժեց՝ իր «աշխատանքային խիտ գրաֆիկի» պատճառով:

Նոյեմբերի սկզբին Սալիքին թուրք-իրաքյան հարաբերությունների կարգավորման ցանկություն հայտնեց, սակայն դրա հետ մեկտեղ մի շարք նախապայմաններ ներկայացրեց թուրքիային՝ ընդգծելով, որ առանց դրանց իրագործման անհնար կլինի երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորումը: Սալիքին, մասնավորապես, հայտարարել է, որ թուրքիան պետք է հարգանք ցուցաբերի Իրաքի նկատմամբ, չմիջամտի նրա ներքին գործերին, չխախտի նրա օդային սահմանը եւ վերադարձնի թուրքիայում գտնվող Իրաքի փոխնախագահ Թարիք ալ-Յաշիմին: Բնականաբար, թուրքական կողմը պատրաստ չէ ընդառաջել այս նախապայմաններին, ինչը վկայում է, որ թուրք-իրաքյան հարաբերությունները շարունակելու են մնալ լարված:

Թուրքիա – քրդեր

Թուրք-իրաքյան հարաբերությունների վրա իր բացասական կնիքն է թողնում քրդական գործունը: Այստեղ պետք է միմյանցից տարանջատել Յյուսիսային Իրաքում բազավորված PKK-ին եւ Յյուսիսային Իրաքի քրդական ինքնավարությանն առնչվող թուրք-իրաքյան հակասությունները:

Այս ամառ PKK-ն բավական ակտիվ գործունեություն ծավալեց թուրքիայում՝ իրականացնելով բազմաթիվ հարձակումներ, որոնց հետեւանքով թուրքիան ռազմական ու տնտեսական կորուստներ կրեց: PKK-ի այդ ակտիվ գործունեությունը պահպանվեց նաեւ աշնանը, եւ եթե հավատանք թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպությանը (MIT), ապա PKK-ն ակտիվ է լինելու նաեւ ձմռանը: Թուրքական կողմն էլ շարունակ PKK-ի գրեթե յուրաքանչյուր խոշոր հարձակմանը պատասխանում է Դիարբեքիրում բազավորված F-16 կործանիչների ավիահարվածներով, որոնց թիրախում են հայտնվում Յյուսիսային Իրաքում գտնվող PKK-ի ճամբարները:

Սեպտեմբերի 26-ին Իրաքի խորհրդարանի անվտանգության հանձնաժողովի փոխնախագահ Իսքենդեր Վիթվիթն աներիկյան The New York Times թերթին տված հարցազրույցի ժամանակ դժգոհություն հայտնեց թուրքիայի կողմից Յյուսիսային Իրաքի շարունակական ռմբակոծումների կապակցությամբ: Ընդգծելով, որ թուրքիան Ղանդիլի ռմբակոծմամբ խախտում է Իրաքի օդային տիրույթը՝ Վիթվիթը սպառնաց, որ Իրաքն այսուհետ կկործանի իր օդային սահմանը խախտած թուրքական ինքնաթիռները: Սակայն թուրքական կողմը տուրք չտվեց այդ սպառնալիքին եւ շարունակեց Յյուսիսային Իրաքի ռմբակոծությունները:

Հոկտեմբերի սկզբին հայտնի դարձավ, որ Թուրքիայի խորհրդարանը պատրաստվում է մեկ տարով երկարաձգել Հյուսիսային Իրաքում բազավորված PKK-ի մարտիկների դեմ անդրսահմանային ռազմական օպերացիաներ իրականացնելու մանդատը, որը սպառվում էր հոկտեմբերի 17-ին: Ի պատասխան դրա, Իրաքի կառավարության նիստում որոշվեց չեղյալ հայտարարել այն բոլոր գործող պայմանագրերը, որոնցով օտար զորքերին թույլատրված է ռազմական օպերացիաներ իրականացնել երկրի տարածքում, ինչպես նաև այսուհետ չկնքել նման պայմանագրեր, քանի որ դրանք պայմաններ են ստեղծում երկրի ինքնիշխանության խախտման համար: Իրաքի կառավարությունն այս առաջարկությունը ներկայացրեց խորհրդարանի հաստատմանը:

Սա առաջին հերթին ուղղված էր Թուրքիայի դեմ, որի զինծառայողները տեղակայված են Իրաքի հյուսիսում՝ PKK-ի դեմ պայքարելու համար: Հիշեցնենք, որ 1995 թվականին Թուրքիայի ու Սադամ Հուսեյնի ղեկավարած Իրաքի միջև կնքված պայմանագրով Թուրքիային իրավունք էր տրվել PKK-ի դեմ պայքարի շրջանակներում մուտք գործել Իրաքի տարածք եւ ռազմական բազա ունենալ այնտեղ: Արդեն 1996 թվականին Թուրքիան մեկ տանկային գումարտակ տեղակայեց Իրաքի հյուսիսում գտնվող Բամերնիի բազայում, ուր ներկայումս զինծառայություն է կրում 1200 թուրք զինծառայող:

Հոկտեմբերի 11-ին Թուրքիայի խորհրդարանը մեկ տարով երկարաձգեց անդրսահմանային օպերացիաների անցկացման ժամկետը: Դրանից օրեր անց Իրաքը Քրդական ինքնավարության ղեկավարությունից պահանջեց հավանության արժանացնել Թուրքիայի հետ սահմանին սեփական զորքերի տեղակայումը, ինչի նպատակը թուրքական զորքերի մուտքն Իրաքի տարածք կանխելն է, ինչպես նաև թուրքական օդուժի կողմից Իրաքի տարածքի ռմբակոծություններին վերջ դնելը: Հարկ է նշել, որ Բաղդադի եւ Էրբիլի վատ հարաբերությունները խանգարում են Իրաքի կենտրոնական կառավարությանը՝ ձեռնարկելու ավելի լուրջ քայլեր երկրի հյուսիսում թուրքական զորքերի ռազմական գործողություններին վերջ դնելու համար:

Նոյեմբերի 7-ին՝ Թուրքիայի խորհրդարանի կողմից անդրսահմանային օպերացիաների մանդատի երկարաձգումից 28 օր անց, թուրքական հատուկջոկատայինների երկու գումարտակ F-16 կործանիչների աջակցությամբ ներխուժեց Հյուսիսային Իրաք եւ 5-10 կիլոմետր խորությամբ առաջ շարժվեց, ինչից հետո վերադարձավ Թուրքիա: Սա վերջին շրջանում Հյուսիսային Իրաքում Թուրքիայի իրականացրած առաջին ցամաքային գործողությունն է:

Ներկայումս Թուրքիան մեծ հույսեր է կապում Յյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության էներգակիրների հարուստ պաշարների ներկրման հետ, ինչը հարուցում է Իրաքի դժգոհությունը: Յյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության նավթային պաշարները կազմում են 45 միլիարդ բարել, գազային պաշարները՝ 6 տրիլիոն խորանարդ մետր, նավթի օրական արդյունահանումը հասել է 300.000 բարելի: Քրդական ինքնավարությանն է բաժին ընկնում Իրաքում արդյունահանվող ողջ նավթի 60 տոկոսը: Հոկտեմբերի վերջերին Յյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության ղեկավարությունը, Բաղդադի կենտրոնական կառավարության շրջանցմամբ, նավթի առաջին խմբաքանակը (ավելի քան 12.000 տոննա) ուղարկեց Արևմուտք եւ հայտարարեց, որ մտադիր է օրական արտահանել 1500 տոննա նավթ: Դրանով իսկ քրդական ինքնավարությունը դուրս եկավ նավթի համաշխարհային շուկա, եւ Թուրքիան (ոչ միայն) շտապում է օգտվել ստեղծված բարեպատեհ իրավիճակից:

Դեռեւս 2012 թվականի հուլիսին Թուրքիայի էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Թաներ Յըլդըզը հայտարարել էր, որ երեք տարվա ընթացքում կարող է մի քանի անգամ մեծացվել Քիրքուկ-Ջեյհան նավթամուղի հզորությունը, որով իրաքյան նավթը փոխադրվում է Թուրքիա: Այստեղ պետք է նշել, որ թուրքական այդ պլանները կարող է խափանել PKK-ն, որն այս տարի արդեն իսկ մի քանի անգամ պայթեցրել է տվյալ նավթամուղը:

Իսկ օգոստոսի սկզբին Թաներ Յըլդըզը հայտարարեց. «Թուրքիան Քրդական ինքնավարության հետ նավթային համագործակցության ժամանակ չի ձեռնարկի որեւէ միջոց, որը կանհանգստացնի Իրաքի կենտրոնական կառավարությանը: Մենք Բաղդադի շահերին հակասող քայլ չենք ձեռնարկի»: Սակայն, իրականում թուրքական կողմի քայլերը չեն վկայում, թե այն իր գործողություններում հաշվի է առնում պաշտոնական Բաղդադի շահերը:

Սեպտեմբերի վերջին Յյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության էներգետիկայի նախարար Աշթի Հավրամին տեղեկացրեց, որ Թուրքիան եւ Յյուսիսային Իրաքի քրդական ինքնավարությունը ստորագրելու են էներգետիկ ոլորտում պատմական համագործակցության պայմանագիր. «Թուրքիային մեր նավթի արտահանման պլանավորված ծավալն ապահովելու համար անհրաժեշտ է դեպի Ջեյհան կառուցել նոր նավթամուղ: 18-24 ամսվա ընթացքում մենք Թուրքիային կսկսենք մատակարարել նաեւ բնական գազ: Մենք պլանավորել ենք տարեկան Թուրքիային վաճառել մինչեւ 15 միլիարդ խորանարդ մետր գազ:

Առաջին փուլում պետք է կառուցվի փոքր գազատար, որի տարեկան թողունակությունը կազմելու է 1 միլիարդ խորանարդ մետր»:

Ներկայումս Թուրքիան ձգտում է օգտվել Իրաքի կենտրոնական կառավարության ու Յուսիսային Իրաքի քրդական ինքնավարության միջև առկա տարածայնություններից՝ իր էներգետիկ պլաններն իրականացնելու համար: Սակայն Իրաքի նավթարդյունաբերության նախարարության պաշտոնական ներկայացուցիչ Ասրմ Ջիհադը հայտարարել է, որ Բաղդադը պատժամիջոցներ կսահմանի թուրքական այն ընկերությունների դեմ, որոնք նավթագազային համաձայնագիր կկնքեն Քրդական ինքնավարության հետ՝ առանց կենտրոնական կառավարության համապատասխան թույլտվության:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալը՝ կարելի է կարծել, որ թուրք-իրաքյան հարաբերությունները շարունակելու են լարված մնալ: Ավելին, դրանք կարող են էլ ավելի սրվել, եթե Իրաքի խորհրդարանը հաստատի երկրի տարածքում թուրքական ռազմական ներկայության վերացման եւ թուրքական օդուժի ռմբակոծություններին վերջ դնելու օրինագիծը, ինչպես նաեւ՝ եթե Թուրքիան, առանց պաշտոնական Բաղդադին իրազեկելու, էներգետիկ համաձայնագրեր կնքի Յուսիսային Իրաքի քրդական ինքնավարության հետ:

ԻՐԱՆԸ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՍԵՆԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իրանի դեմ կիրառվող միջազգային պատժամիջոցները զգալի փոփոխություններ են առաջացրել Իրանի Իսլամական Հանրապետության տնտեսական կյանքում: Միեւնույն ժամանակ, դրանք լուրջ ազդեցություն են թողել նաեւ քաղաքական գործընթացների վրա:

Պատժամիջոցների տնտեսական ազդեցությունը

Միացյալ Նահանգների եւ ԵՄ-ի կողմից Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցներից ամենաազդեցիկը կարելի է համարել ոչ թե նավթի ներկրման վերաբերյալ ընդունված սահմանափակումները, այլ հետեւյալ երկու որոշումները.

1. Իրանական բանկերի հետ տրանզակցիոն գործարքների կատարման եւ SWIFT համակարգում Իրանի մասնակցության սառեցումը: Արդյունքում՝ Իրանը, փաստորեն, զրկվել է միջազգային ֆինանսական կազմակերպություններից եւ բանկերից ԱՄՆ դոլար գնելու հնարավորությունից, ինչը նվազեցրել է արտարժույթի հոսքը երկիր եւ սահմանափակել առաջին անհրաժեշտության ապրանքների ներկրումը:
2. Գրեթե բոլոր միջազգային ապահովագրական ընկերությունները հրաժարվել են ապահովագրել Իրանական նավթով բարձրած նավերը, ինչը զգալիորեն (մոտ 30%-ով) կրճատել է Իրանական նավթի արտահանման ծավալները: Խնդրի էությունն այն է, որ անգամ այն պետությունները, որոնք չեն պաշտպանել Իրանի դեմ կիրառվող միջազգային պատժամիջոցները, ստիպված են եղել սահմանափակել Իրանական նավթի գնումը, քանի որ դրա տեղափոխումն ապահովագրված չէ, եւ ցանկացած ֆորսմաժորային իրավիճակի դեպքում գնորդները կարող են կորցնել ողջ ապրանքն ու դրա համար վճարված գումարները:

Այս պատժամիջոցների ընդունման արդյունքում Իրանը հայտնվել է իրական մակրոտնտեսական ճգնաժամի առջեւ: Մի կողմից՝ կրճատվել

են նավթի արտահանումից ստացվող եկամուտները, մյուս կողմից՝ այդ եկամուտները, որպես կանոն, ստացվում են ոչ թե ԱՄՆ դոլարով կամ եվրոյով, այլ այն պետությունների արժույթով, որոնք գնում են իրանական հումքը: Որպես հետեւանք՝ Իրանը ստիպված է իր ներկրումներն ապահովել այն պետություններից, որոնք էլ գնում են իրանական նավթը, ինչն, իր հերթին, լուրջ սահմանափակումներ է մտցնում ներկրվող ապրանքների տեսականու մեջ, քանի որ, օրինակ, Իրանը չի կարողանում անհրաժեշտ ծավալներով ցորեն ներկրել: Եթե նախկինում ցորենի ներկրման հիմնական աղբյուրը Կանադան էր, ապա այսօր Թեհրանը ստիպված է որոնել նոր աղբյուրներ այն պետությունների շարքից, որոնք գնում են իրանական նավթը:

Պատժամիջոցների հետեւանքով Իրանում զգալիորեն աճել է ինֆլյացիան. օրինակ, Իրանում մեծ սպառում ունեցող հավի միսը, որի 50%-ը ներկրվում է, թանկացել է շուրջ 4 անգամ: Թանկացել են նաեւ այլ առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ կարագը, ձեթը եւ այլուրը:

Սիւնույն ժամանակ, պատժամիջոցների եւ տնտեսական խնդիրների պատճառով Իրանի Կենտրոնական բանկն արդեն սեպտեմբերի վերջին ցույց տվեց, որ չի կարողանում զսպել իրանական արժույթի արժեզրկումը: Մեկ օրվա ընթացքում այն արժեզրկվեց 70%-ով, ինչը ցույց է տալիս երկրի մակրոտնտեսական անկման ողջ ծավալը:

Պետք է նշել, սակայն, որ Թեհրանը լուրջ քայլերի է դիմում երկրում տնտեսական իրավիճակի կարգավորման համար: Նշենք դրանցից ամենակարեւորները:

Առաջին. Իրանա-իրաքյան պատերազմից հետո առաջին անգամ Իրանը դիմեց նավթի «սեւ շուկայի» ձեւավորմանը: Դրա հիմնական նպատակն է այլընտրանքային ճանապարհով նավթի արտահանման կազմակերպումը, ինչը հնարավորություն կտա այն միջնորդավորված եղանակով վաճառել նաեւ այն պետություններին, որոնք ֆորմալ առումով իրաժարվել են Իրանի հետ համագործակցությունից: Սրան հասնելու համար Իրանի կառավարությունը սեպտեմբեր-հոկտեմբերին փաստացի վերացրեց Իրանի ազգային նավթային ընկերության նավթի արտահանման մենաշնորհը՝ իրավունք տալով նոր ձեւավորվող «կոոպերատիվներին» ընկերությունից անկախ նավթ արտահանել եւ, միաժամանակ, չտեղեկացնել արտահանման ուղղությունների վերաբերյալ:

Երկրորդ. Իրանի Կենտրոնական բանկի որոշմամբ Իրանի ազգային նավթային ընկերությանը տրամադրվել է \$5 մլրդ՝ Նավթի արտահան-

ման ապահովագրման իրանական ազգային հիմնադրամի ստեղծման համար, ինչը հնարավորություն կտա Իրանին սեփական միջոցներով ապահովագրել նավթ տեղափոխող նավերը եւ խրախուսել նախկին գնորդներին՝ վերականգնել Իրանից նավթի գնման ծավալները:

Երրորդ. Իրանն արտաքին քաղաքական հարթակում սկսել է նոր դաշնակիցներ եւ գործընկերներ փնտրել, որոնք կարող են օգնել Թեհրանին՝ լուծել տնտեսական խնդիրները: Որքան էլ տարօրինակ է, բայց Թեհրանին այս հարցում սկսել է ակտիվորեն օգնել ոչ թե Չինաստանը, որը 30%-ով կրճատել է իրանական նավթի գնման ծավալները, այլ Մերձավոր Արեւելքում երբեւիցե հատուկ ակտիվություն չցուցաբերած Յնդկաստանը: Վերջինս հոկտեմբերին համաձայնեցրել է Իրանին հատուկ գնով ցորեն մատակարարելու հարցը, ինչը կօգնի Թեհրանին խուսափել հացի թանկացման ցավոտ հեռանկարից: Յնդկաստանը նաեւ իր ամբողջ նավթավերամշակման հզորություններն ուղղել է իրանական հում նավթի վերամշակմանը, որը բարտեբային «բենզին՝ նավթի դիմաց» եղանակով պետք է վերարտահանվի Իրան:

Սակայն բավական կարելու է նաեւ Յնդկաստանի քայլերն՝ ուղղված Իրանի հետ համատեղ խոշոր նախագծերի իրականացմանը: Դրանցից ամենաթանկը Պարսից ծոցից մինչեւ Աֆղանստան երկաթգծի կառուցումն է, որի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ \$10 մլրդ: Այս երկաթգծի կառուցման շնորհիվ, որը կիրականացվի հիմնականում հնդկական ֆինանսավորմամբ, փաստացի տրանսպորտային շրջափակման կենթարկվի Պակիստանը, իսկ աֆղանական շուկան եւ տնտեսությունն ուղղակի մուտք կունենան Պարսից ծոց եւ Հարավային Ասիայի շուկաներ՝ շրջանցելով Պակիստանը, որն այսօր զգալի ազդեցություն ունի Աֆղանստանի տնտեսական եւ քաղաքական կյանքի վրա:

Պետք է նշել, որ Թեհրանի կողմից իրականացվող տնտեսական ծրագրերն ունեն դրական արդյունքների բավական մեծ շանս, քանի որ փաստացի պատժամիջոցներից խուսափելու նոր համակարգ է ձեւավորվում: Թե ինչպես կընթանան հետագա զարգացումները՝ մեծ մասամբ կախված են ԱՄՆ նախագահի պաշտոնին վերընտրված Բ.Օբամայի քայլերից. եթե նա պաշտպանի Իրանի դեմ նոր պատժամիջոցների կիրառման ծրագրերը, ապա Թեհրանը կկանգնի նոր որակի տնտեսական խնդիրների առջեւ: Իսկ եթե Վաշինգտոնը գնա Թեհրանի հետ երկխոսության հաստատման ճանապարհով, ինչի մասին բավական շատ են խոսում վերջին շրջանում, ապա Իրանը կկարողանա խուսափել տնտեսական իրադրության հետագա վատթարացումից:

Ինչեւէ, Թեհրանի համար բավական ցավալի կարելի է համարել ԿՅՎ ղեկավար, գեներալ Դ.Փեթրեուսի հրաժարականը, քանի որ վերջինս իրանա-ամերիկյան երկխոսության ակտիվ աջակիցն էր:

Պատժամիջոցների քաղաքական ազդեցությունը

Տնտեսական խնդիրները եւ վատթարացող սոցիալական իրավիճակը լուրջ ազդեցություն են ունեցել Իրանի ներքաղաքական կյանքի վրա: Իրանի խորհրդարանը, որի կազմի հիմնական մասը կապված է երկրի կրոնական իշխանությունների հետ, ակտիվորեն սկսել է քննադատել նախագահին եւ նրան ներկայացնել որպես տնտեսական անհաջողությունների հիմնական մեղավոր: Իր հերթին՝ Մ.Ահմադինեժադը, կարծես թե գիտակցելով, որ երկրում ստեղծված բարդ տնտեսական պայմանների պատճառով հոգեւոր իշխանություններն ու մեջլիսը չեն գնա նախագահի պաշտոնանկության ճանապարհով, սկսել է ավելի համարձակ գործել: Յենց այս նկատառումով հոկտեմբերին նախագահը իրահրեց իրանական «բանտային սկանդալը»՝ ցանկություն հայտնելով Թեհրանի բանտ այցելել եւ հանդիպել կալանավորների հետ: Վերջիններիս շրջանում շատ են Մ.Ահմադինեժադի յուրայիններն ու ընկերները, որոնք վերջին մեկ տարվա ընթացքում տարբեր մեղադրանքներով ձերբակալվել եւ բանտարկության են դատապարտվել: Թեւեւ Իրանի գլխավոր դատախազն ու գերագույն դատարանի ղեկավարները մերժեցին նախագահի խնդրանքը, բայց Մ.Ահմադինեժադն իր քաղաքական թիմին ցույց տվեց, որ պահպանում է սեփական անկախությունն ու երկրի հոգեւոր իշխանությունների հետ որեւէ գործարքի չի գնացել:

Այսօր Իրանում գրեթե հակառակ պահվածք ունի նախկին նախագահ Ա.Ա. Յաշեմի-Ռաֆսանջանին, որը վերջին ամիսներին բավական ջերմացրել է հարաբերությունները հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեյիի հետ: Ռաֆսանջանիի համար հարաբերությունների կարգավորումը Ա.Խամենեյիի հետ առավել քան անհրաժեշտ է, քանի որ հենց վերջինս կարող է ազդել նախկին նախագահի դստեր եւ որդու դեմ հարուցված քրեական գործերի ընթացքի վրա: Եվ կարելի է ասել, որ այս նպատակին Յաշեմի-Ռաֆսանջանին արդեն հասել է. նրա որդուն ներկայացված մեղադրանքը «հակապետական գործողություններից» փոխվել է «դիրքի չարաչափման», իսկ դստեր «դավաճանության» մեղադրանքը փոխարինվել է «հասարակական անկարգությունների մասնակցությամբ»: Ինչ վերաբերում է Ալի Խամենեյիին, ապա նա եւս ստիպված է եղել գնալ

Չաշենի-Ռաֆսանջանիի հետ հարաբերությունների կարգավորմանը, քանի որ Արեւմուտքի հետ ակտիվացող դիմակայության պայմաններում «ամերիկամետ» Չաշենի-Ռաֆսանջանիի վերադարձը մեծ քաղաքականություն կարող է օգտագործվել նույն Արեւմուտքի հետ հնարավոր երկխոսության հաստատման համար: Այս տեսանկյունից տարօրինակ չէ, որ Չմիավորված պետությունների պայմանագրի գազաթաժողովին, որը տեղի ունեցավ օգոստոսի վերջին Թեհրանում, Ալի խամենեյիի հետ հյուրերին ընդունում էր Չաշենի-Ռաֆսանջանին, որն էլ հիմնական միստի ժամանակ նստած էր հոգեւոր առաջնորդի կողքին:

Տարօրինակ է, բայց Իրանում ակտիվացել են խոսակցություններն այն մասին, որ 2013թ. կայանալիք նախագահական ընտրություններին Չաշենի-Ռաֆսանջանին կարող է առաջադրել իր թեկնածությունը եւ ստանալ Ալի խամենեյիի աջակցությունը: Սա պայմանավորված է նրանով, որ Իրանի նախկին նախագահն աշխարհին հայտնի է որպես բարեփոխիչ եւ երկխոսության կողմնակից, ինչը կարող է հանգեցնել Իրանի շուրջ ձեւավորված իրավիճակի մեղմացմանը: Դեռեւս հստակ չի կարելի ասել, թե որքան հավանական է Չաշենի-Ռաֆսանջանիի առաջադրումը, բայց կանխատեսումներ անելիս պետք է նշել, որ անգամ եթե ամեն ինչ ընթանա այնպես, ինչպես խոսում են, Չաշենի-Ռաֆսանջանին դժվար թե դիմի Իրանի միջուկային ծրագրի ուղղության կտրուկ փոփոխության, քանի որ հենց Իրանի նախկին նախագահն է 1991-ին վերսկսել Իսլամական հեղափոխությունից հետո ընդհատված միջուկային ծրագիրը եւ անմիջականորեն աջակցել ուրանի հարստացման տեխնոլոգիաների զարգացմանն Իրանում:

Միեւնույն ժամանակ, պետք է նշել մի նոր իրողություն եւս. տնտեսական ճգնաժամն ի ցույց է դրել կառավարության եւ խորհրդարանի միջեւ փոխգործակցության բացակայության իրական հետեւանքները. որպես կանոն, տնտեսական այս կամ այն խնդրի կարգավորման համար կառավարությանն անհրաժեշտ օրինագծի ընդունումը մեջլիսի կողմից դառնում է մեծ խնդիր, քանի որ պատգամավորները կառավարությունից խորհրդարան եկած ցանկացած փաստաթուղթ օգտագործում են նախագահին քննադատելու համար, ինչը ձգձգում է օրինագծի ընդունումն ու խանգարում օպերատիվ արձագանքմանը:

Չենց այս պատճառով խորհրդարանում եւ հոգեւոր շրջանակներում սկսել են էլ ավելի ակտիվորեն քննարկել Իրանում նախագահի պաշտոնի վերացման եւ այն վարչապետի պաշտոնով փոխարինելու հարցը: Ի տարբերություն նախագահի, որն ընտրվում է ուղիղ քվեարկության

միջոցով, վարչապետը պետք է ընտրվի խորհրդարանի կողմից եւ ներկայացնի օրենսդիր մարմնում մեծամասնություն ունեցողների շահերը: Սա, իր հերթին, պետք է բերի լուրջ փոխգործակցության խորհրդարանի եւ կառավարության միջեւ ու վերջինիս օպերատիվ որոշումների ընդունման ավելի մեծ հնարավորություններ տա:

Ինչեւէ, պետք է նշել, որ քաղաքական հարաբերությունները եւ քննարկումներն Իրանում գալիք ամիսներին էլ ավելի են ակտիվանալու, քանի որ դրանց վրա, մի կողմից, շարունակելու են ազդել տնտեսական ճգնաժամը, մյուս կողմից՝ մոտեցող նախագահական ընտրությունները:

**ԵՎՐՈՊԱ. ՎԵՐԻՆՏԵԳՐՈ՞ՒՄ, ԹԵ՞
ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱԶԵՎՈՒՄ
Արտաշես Տեր-Հարությունյան**

Սույն թվականի սեպտեմբերի 27-ին Իսպանիայի մաս կազմող Կատալոնիայի խորհրդարանը որոշում կայացրեց, ըստ որի՝ նոյեմբերի 25-ին ինքնավար մարզում կայանալիք վաղաժամ խորհրդարանական ընտրություններին զուգահեռ՝ կանցկացվի նաեւ անկախության հանրաքվե:

Թեեւ պաշտոնական Մադրիդը բավական կոշտ արձագանքեց կատալոնացիների նման որոշմանը՝ նշելով, թե կօգտագործվեն իրավական բոլոր լծակները Իսպանիայի կազմից մարզի դուրս գալը խոչընդոտելու համար եւ անգամ հնչեցին կոչեր՝ զորք ուղարկել «ապստամբ Կատալոնիա», սակայն հարցն ուշադրության կենտրոնում պահող եվրոպացի դիտորդների մեծ մասը կարծում է, որ Իսպանիայի կենտրոնական կառավարության նման կոշտ մոտեցումը կարող է միայն սրել իրավիճակը եւ զարգացումները դարձնել անկանխատեսելի: Բերվում է այն փաստարկը, որ Կատալոնիայի 7.5 մլն բնակչության մոտ 2/3-ը կողմ է անկախությանը, եւ այդ պարագայում ուժի կիրառումը Եվրամիության անդամ Իսպանիայի կողմից կարող է ունենալ միայն կարճատեւ զսպող նշանակություն՝ փոխարենը ծայրահեղ բացասական հետեւանքներ ունենալով առանց այդ էլ խոր ճգնաժամում գտնվող իսպանական տնտեսության համար:

Մյուս կողմից՝ գրեթե կասկածի տակ չի առնվում այն գնահատականը, որ եթե ներկայում կատալոնացիներին չհաջողվի հասնել *de jure* անկախության, առաջիկա հանրաքվեն միանշանակ լուրջ քայլ է հանդիսանալու այդ ուղղությամբ եւ հարցն այլեւս վերաբերելու է ժամանակին:

Խնդիրը, սակայն, միայն Կատալոնիան ու Իսպանիան չեն: Վերջին երկու ամիսներին փոխվեց իրավիճակը նաեւ Մեծ Բրիտանիայի կազմում գտնվող Շոտլանդիայի եւ Բելգիայի մաս հանդիսացող Ֆլանդրիայի անկախացման շուրջ ընթացող զարգացումներում: Միջազգային փորձագիտական հանրությունը սկսեց բարձրաձայնել եվրոպական մայրցամաքում առաջացած ոչ թե առանձին երեւույթների, այլ սահմանների վերաձեւման հերթական փուլի մասին, ինչը Եվրոպային բնորոշ է միջինը հիսուն տարին մեկ:

Կատալոնիա

1975թ. Ֆրանկոյի մահվանից հետո կազմված Իսպանիայի նոր սահմանադրության (1978թ.) համաձայն, երկիրը բաժանվեց ինքնավար 17 մարզերի (եւ ինքնավար երկու քաղաքի), որոնք իրենց հերթին բաժանվեցին 50 շրջանների: Ինքնավար մարզերից յուրաքանչյուրն ընտրում է իր մարզային խորհրդարանը, որն էլ Իսպանիայի թագավորի առաջադրմամբ ձեւավորում է մարզային կառավարություն՝ կառավարության ղեկավարի (նախագահի) գլխավորությամբ: Մարզային իշխանությունները տեղական հարցերի լուծման գործում, ինչպես նաեւ դատական ու ֆինանսական գործերում ունեն ինքնավարություն: Օրինակ, մարզային բյուջե է գնում տեղում հավաքված հարկերի, տուրքերի որոշակի մասը:

Կատալոնիան նշված 17 ինքնավար մարզերից մեկն է, սակայն տեղի բնակչությունն իրեն համարում է այլ ազգության ներկայացուցիչ՝ ոչ իսպանացի: Այս հանգամանքը բնորոշ է նաեւ երկու այլ մարզերի՝ Բասկերի երկրին ու Գալիցիային (որտեղից է, ի դեպ, Իսպանիայի ներկայիս վարչապետ Մարիանո Ռահոյը): Նշված երեք մարզերի բնակչությունը տեղական պաշտոնական գրագրությունում իսպաներենի հետ միասին օգտագործում է նաեւ իր մայրենի լեզուն:

Կատալոնացիների անկախանալու ձգտումների հիմքում միայն ազգային կամ ֆինանսատնտեսական հարցերը չեն: Կատալոնիան ունի անկախ պետականության դարերի պատմություն: Կատալոնական խորհրդարանն, օրինակ, համարվում է Եվրոպայի ամենահին օրենսդիր մարմիններից մեկը (XI դար), իսկ երկրամասի՝ Բարսելոնայի երկրի (Բարսելոնա քաղաքը միշտ եղել է ու կա Կատալոնիայի մայրաքաղաքը, վարչական կենտրոնը)՝ որպես անկախ իշխանության, մասին առաջին անգամ խոսվում է 987թ.:

ժամանակակից Կատալոնիան Իսպանիայի, թերեւս, ամենազարգացած մարզն է: Ջբաղեցնելով Իսպանիայի տարածքի 6.3%-ը (32.1 հազ. կմ²) եւ ունենալով երկրի բնակչության 16%-ը (մոտ 7.5 մլն մարդ)՝ Կատալոնիան 2011թ. տվել է Իսպանիայի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 23%-ը կամ շուրջ \$340 մլրդ (ըստ IMF տվյալների): Իր այս ցուցանիշով Կատալոնիան աշխարհի անկախ երկրների շարքում 2011թ. կգրավեր 32-րդ հորիզոնականը՝ առաջ անցնելով այնպիսի երկրներից, ինչպիսիք են Դանիան, Ֆինլանդիան, Չիլին, Իսրայելը, Պորտուգալիան եւ այլն:

Մյուս կողմից՝ այս տվյալները ցույց են տալիս, որ մարդիկ Կատալոնիայում անհամեմատ բարեկեցիկ են, քան մնացած Իսպանիայում:

Այսպես, 2011թ. տվյալներով՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ողջ Իսպանիայում կազմել է \$31.4 հազ., եւ այդ ցուցանիշով Իսպանիան զբաղեցրել է 28-րդ տեղն աշխարհում: Մինչդեռ, անցած տարի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Կատալոնիայում կազմել է \$45.3 հազ., այսինքն՝ գրեթե կիսով չափ ավելի, եւ իր այդ ցուցանիշով Կատալոնիան աշխարհի անկախ պետությունների շարքում կգրավեր 8-րդ հորիզոնականը՝ առաջ անցնելով Շվեյցարիայից, Նիդեռլանդներից, Ավստրիայից ու Շվեդիայից:

Արժույթի միջազգային հիմնադրամի (IMF) տվյալներով՝ այս տարի Իսպանիայի տնտեսությունն անկում կապրի ավելի քան 1.5%-ով: Մյուս տարի նույնպես հիմնադրամն անկում է կանխատեսում իսպանական տնտեսության համար՝ շուրջ 1.3%, եւ իր այս ցուցանիշով եվրագոտու 17 երկրների շարքում (Եվրոպական միության 27 անդամներից միայն 17-ն են մտնում եվրոյի գոտու մեջ) Իսպանիան մտնում է վատագույն հնգյակի մեջ՝ Հունաստանի, Պորտուգալիայի, Սլովենիայի ու Իտալիայի հետ միասին: Իսպանիան մինչ օրս չի կարողացել վերականգնել մինչեւ 2008թ. ճգնաժամը եղած ՀՆԱ մակարդակը:

Ահա նման պայմաններում, օգոստոսին Կատալոնիայի կառավարությունը դիմեց Մադրիդ՝ շուրջ €5 մլրդ ֆինանսական օգնության խնդրանքով: Մարիանո Ռահոյի կառավարությունը, սակայն, ստիպված էր մերժել կատալոնացիների խնդրանքը, քանի որ իսպանական մարզերի օժանդակության համար նախատեսված գումարի չափը կազմում էր €18 մլրդ ու միայն Կատալոնիային €5 մլրդ-ի չափով օգնության տրամադրումը Մադրիդի ուժերից վեր էր: Ավելին՝ Իսպանիայի կենտրոնական կառավարությունը ստիպված եղավ հայտարարել մարզերից գանձվող հարկերի մեծացման մասին, ինչը լուրջ դժգոհություն առաջացրեց տեղերում:

Կատալոնիայում դժգոհության պատճառ դարձավ նաեւ այն, որ Մադրիդից մերժեցին Բարսելոնայի մեկ այլ առաջարկ՝ ընդլայնել տեղական կառավարության ինքնավարությունը, ինչը վերջինիս իրավունք կտար ինքնուրույն որոշել կենտրոն փոխանցվող գումարի չափը: Օրինակ, անցած տարի Կատալոնիան Մադրիդ է փոխանցել մոտ €16 մլրդ (\$20.3 մլրդ):

Վերջապես, սեպտեմբերին, Բարսելոնայում տեղի ունեցած բողոքի հսկայածավալ ակցիայից հետո, Կատալոնիայում իշխող աջամետ «Կոնվերգենցիա եւ միություն» կոալիցիան (որը մարզային խորհրդարանում ունի մեծամասնություն) նախ օրենսդիր մարմնով «անցկացրեց» նոյեմբերի 25-ին վաղաժամ ընտրություններ անցկացնելու մասին որոշումը, ապա օրեր անց հասավ նրան, որ Կատալոնիայի խորհրդարանը որոշեց վաղաժամ ընտրությունների հետ միաժամանակ անցկացնել անկախության հանրաքվե:

Շոտլանդիա, Ֆլանդրիա

Հոկտեմբերի 15-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեվիդ Քեմերոնը եւ Շոտլանդիայի առաջին նախարար (կառավարության ղեկավար) Ալեքսանդեր Սելճոնդը ստորագրեցին մի համաձայնագիր, որը թույլ է տալիս 2014թ. աշնանը Շոտլանդիայում անցկացնել անկախության հանրաքվե: Հանրաքվեում շոտլանդացիները պետք է պատասխանեն ընդամենը մեկ հարցի՝ ցանկանո՞ւմ են մնալ Մեծ Բրիտանիայի կազմում:

Սելճոնդի ղեկավարած Շոտլանդական ազգային կուսակցությունը հաղթանակ տարավ անցած տարի մայիսին կայացած Շոտլանդիայի խորհրդարանական ընտրություններում, եւ Լոնդոնից անկախանալը կուսակցության նախընտրական առանցքային գաղափարներից մեկն էր: Սելճոնդի կողմնակիցների ներկայացմամբ՝ Լոնդոնի ծախսատար արտաքին ու պաշտպանական քաղաքականությունից զերծ մնալը եւ Հյուսիսային ծովում՝ Շոտլանդիայի տարածքային ջրերում առկա նավթի ու գազի պաշարները թույլ կտան Շոտլանդիային լինել ավելի բարեկեցիկ եւ անկախ:

Հոկտեմբերի 14-ին Բելգիայի մաս կազմող Ֆլանդրիայում կայացան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ, որոնց արդյունքում ամենից շատ քվե՝ մոտ 30%, ստացավ ազգայնական Նոր ֆլամանդյան միությունը, որի առաջնորդ Բարտ դե Վեերը ընտրվեց Եվրոպայում երկրորդ խոշոր նավահանգիստ քաղաքի՝ Անտվերպենի քաղաքապետ: Ընտրությունից հետո դե Վեերը հանդես եկավ հայտարարությամբ՝ պահանջելով Բելգիայի կենտրոնական կառավարությունից բանակցություններ սկսել Բելգիան կոնֆեդերատիվ պետություն դարձնելու նպատակով: Ավելորդ չէ հիշեցնել, որ 2007-ից Բելգիայի Թագավորությունը գտնվում է քաղաքական շարունակական ճգնաժամում, քանի որ հյուսիսային՝ ֆլամանդյան եւ հարավային՝ վալոնյան հատվածները մշտապես լուրջ հակասություններ ունեն միասնական կառավարության ձեւավորման գործում:

Հետեւություններ

Անշուշտ, Եվրոպայում թափ ստացած անկախական զարգացումների հիմքում այսօր նախելառաջ պետք է տեսնել Հին աշխարհը պատած ֆինանսատնտեսական ճգնաժամը: Այդպիսի ճգնաժամերի պատճառով փոքր ու մեծ կայսրությունների փլուզումն օրինաչափ է պատմության ընթացքում:

Սակայն նման գործընթացի հիմքում միայն ֆինանսատնտեսական պատճառները չեն: Եվրոպայում միանգամից մի քանի երկրում թափ հավաքած անկախական շարժումները կարող են վկայել ոչ միայն տվյալ պետությունների, կայսրությունների պատմական ժամանակաշրջանի ավարտի, այլև Եվրոպական միության շրջանակներում սկիզբ առնող նոր գործընթացի մասին: Վերջին շաբաթներին եվրոպացի մի շարք փորձագետներ հանդես եկան հրապարակումներով, թե ազգային պետությունների մասնատվելը կարող է ձեռնառու լինել նոր՝ ավելի ինտեգրացված եվրամիության կառուցման առումով:

Եվ վերջապես՝ Եվրոպայում տեղի ունեցող այդ զարգացումները կարող են իրենց ազդեցությունը թողնել նաև միջազգային հարաբերությունների վրա, քանի որ ներկայիս աշխարհակարգի հիմքում ընկած է երկրորդ աշխարհամարտից ու Սառը պատերազմի ավարտից հետո Եվրոպայում հաստատված կարգը, եւ այդ կարգի կամ եվրոպական սահմանների փոփոխությունն իր հետեւանքները կունենա ողջ աշխարհի համար:

Սայիդ Չեթինօղլու. «Շատ քչերն են, որ չեն մասնակցել ցեղասպանությանը»

*Հարցազրույց թուրք վերլուծաբան, պատմաբան
Սայիդ Չեթինօղլուի հետ*

Հարց – Պարոն Չեթինօղլու, թեև Միություն եւ առաջադիմություն կուսակցության կարգախոսն էր «Ազատություն, հավասարություն, եղբայրություն», սակայն Օսմանյան կայսրությունում հենց երիտթուրքերի իշխանության օրոք քրիստոնյաների նկատմամբ բռնությունները հետզհետե աճեցին: Մասնավորապես, Ջնյունմիայում քրիստոնյաների նկատմամբ գործադրված բռնությունների առաջին ալիքը ե՞րբ սկսվեց:

Պատասխան – Պետք է չմոռանալ, որ Միություն եւ առաջադիմություն կուսակցությունը կազմակերպվել էր համաթյուրքականության հենքի վրա: Ահմեթ Ռզայից մինչև Միզանջը Մուրադ, նույնիսկ մինչև դոկտոր Նազըմ «օսմանյան ազգ» բառակապակցության համարժեքը *թյուրքն* է: Միզանջը Մուրադն ասելով, թե «պանթյուրքիզմի, օսմանիզմի ու պանիսլամիզմի անունից, որոնք մեր ընկերները սխալմամբ կարծում են, թե մեկը մյուսից անկախ են, աղոթքում չսխալվենք», նշում է, որ ինքն այն կարծիքին է, թե այս երեքը միասին են: Օսմանիզմն ու պանիսլամիզմը գաղափարախոսություններ են, որոնք հպարտանում են թյուրք լինելու համար: Նույնիսկ այն ժամանակ, երբ պանթյուրքիզմը քաղաքականորեն դեռևս ամբողջովին չէր զարգացել, եւ երբ թուրքերն իրենց համարում էին օսմանյան գերիշխող տարր, պաշտպանում էին այն տեսակետը, թե մյուս տարրերն իրենց են ենթարկվում, եւ սա բացահայտ ասում էին: Աբդուլ Համիդից մինչև Նոր օսմաններ եւ երիտթուրքեր այս մտածելակերպը չի փոխվել:

Օսմանիզմից եւ պանիսլամիզմից ավելի չար միտում ունի պանթյուրքիզմը: Շատ կարճ ժամանակահատվածում «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսները թուրքերի համար վերածվեցին ազատության եւ հավասարության, իսկ մյուս տարրերի համար՝ կարգապահության: Այս տեսանկյունից 1908 թվականը խաբկանք է: *Սահմանադրական բարեփոխում* արտահայտությունը, խնդիրն ապագային թողնելով, այն իմաստազրկելու նպատակ ուներ: Երիտթուրքերի

օրակարգի ամենակարելուր կետերից մեկն է՝ թնիկ գտումն էր: Մինչ 1908թ. Բալկաններում եւ հատկապես Մակեդոնիայում երիտթուրքերի գործողություններն ասածիս բացահայտ հանցանշաններն են: Այս տեսակետից ուսուցողական են Գրենեբելի Բեքիր Ֆիքիրի եւ Էնվերի հորեղբայր Յալիլ փաշայի հուշերը: Այս հարցում բացահայտ է նաեւ Թալեաթի ու մյուսների տեսակետը. նրանցից ամենակարելուր անձանցից դոկտոր Նազըմը, որը երիտթուրքերի գաղափարախոսն էր, կազմակերպիչն ու գործիչը, դեռեւս 1908թ. օգոստոսին Ջնյուռնիայում հունաստանցի լրագրողին առանց վարանելու, բացահայտ հայտնել է աշխարհագրական շրջանը հնագույն ժողովուրդներից մաքրելու վերաբերյալ իրենց օրակարգի մասին: Ահա սա էլ դեպքերի ժամանակագրությունն է: Այսպիսով՝ դեպքերը տեղի են ունենալու դոկտոր Նազըմի գծած շրջանակում՝ օսմանյան աշխարհագրական շրջանը ոչ մուսուլման-թյուրք տարրերի համար վերածելով արյան ծովի. հնագույն ժողովուրդներին մաքրելու էին իրենց պատմական հողերից:

Հատկապես Սալոնիկում 1911թ. հոկտեմբերին կուսակցության կայացրած որոշումների արդյունքում ոչ թուրք եւ մուսուլման տարրերի նկատմամբ ճնշումների քաղաքականությունը, համակարգված ձեւ ստանալով, մտավ պաշտոնական ծրագրի մեջ:

Հույների դեմ առաջին հարվածը հասցրին պատերազմից առաջ: 1914թ. առաջին կեսին 250 հազար հույնի վնդեցիցն եւ տիրացան նրանց ունեցվածքին: Այսպիսով՝ Թրակիայի եւ Ջնյուռնիայի թրքացման համար կատարվեց առաջին քայլը, որը, սակայն, բավարար չէր: Այս գործողությունն ամենաքիչը պետք է 10 տարվա գործընթաց ունենար: Այս ընթացքում էթնիկ գտման ծրագիրը համառորեն կյանքի էին կոչելու եւ ժամանակ առ ժամանակ՝ ըստ իրավիճակի, զուգորդելու էին նաեւ ճնշումներով: Արդյունքում՝ մեծ քաղաքներում հելենիզմը սահմանափակվելու եւ կարելուություն չներկայացնող փոքրամասնության էր վերածվելու: Մնացյալների համար կառավարության ձեռնարկած վարչական եւ տնտեսական միջոցառումները բավարար էին լինելու: Ըստ Էնվերի արտահայտության՝ հարուստները դառնալու էին աղքատ, աղքատները՝ մուրացիկ, բոլոր միանգամից հարստացածներն աղքատանալու էին եւ թուրքերի ստրուկն ու ծառան դառնալու:

1907թ. երիտթուրքերի կոնգրեսի ժամանակ արքայազն Սաբահադդինն ասել է, թե մինչ օրս քրիստոնյաներին այս հողերի վրա պահելը պայմանավորված էր Եվրոպայի նկատմամբ տածած վախով: Երբ այդ վախը պատերազմական մթնոլորտում հոգս ցնդի, երիտթուրքական

մտածելակերպը, շղթաներից ազատվելով, ցեղասպանության կենթարկի այս հողերի վրա ապրող հնագույն ժողովուրդներին:

Չարց – Չայտնի է, որ Ադանայի ջարդերի ժամանակ ոչ մուսուլման հպատակների նկատմամբ սադրիչ գործողությունների են դիմել: Ջնյուռնիայի ջարդերի ժամանակ ինչպե՞ս էին պղտորում ժողովրդի միտքը:

Պատասխան – Եթե Կիլիկիայի ջարդերը հակիրճ բնորոշելու լինենք, ապա հեշտությամբ կարելի է ասել, որ այն ցեղասպանության փորձ էր: 1909թ. ապրիլին Կիլիկիայում տեղի ունեցած կոտորածները որոշ իմաստով այն դեպքերի լրաբերն էին, որոնք տեղի էին ունենալու ապագայում: Տեղական իթիհադական ղեկավարության գործած սկզբնական կոտորածներից հետո դեպքերը կարգավորելու եւ հանգստացնելու համար ուղարկված Դեդեաղաջ գումարտակի եւ իթիհադականների տեղական ղեկավարության համագործակցության արդյունքում իրականացված կոտորածների ժամանակ սպանվեց 25-30 հազար հայ, թալանվեց նրանց ունեցվածքը: Այս տեսանկյունից 1909թ. Կիլիկիայի ջարդերը ցեղասպանության փորձ են: Ինչպես 1894–1896թթ. ջարդերի ժամանակ, Կիլիկիայի կոտորածների ժամանակ եւս թիրախ էին ընտրվել հայ տղամարդիկ. սրա նպատակն էր 1915թ. ցեղասպանության ժամանակ հայ ժողովրդին զրկել պաշտպանությունից:

Կիլիկիայի դեպքերը տեղի ունեցան այն ժամանակ, երբ երիտթուրքերի՝ իշխանության գալը շատ մոտ էր: Քանի որ երիտթուրքերը ծագումով մակեդոնացիներ էին, սկզբնական շրջանում Անատոլիայում ուժ եւ կազմակերպություններ չուներին: Կարճ ժամանակահատվածում քրիստոնյա տարրի օգնությամբ Անատոլիայում հզորացած երիտթուրքերը, զգալով, որ այլեւս այդ տարրի կարիքը չուներ, չվարանեցին նրան ոչնչացնել:

1913 եւ 1915 թվականների արդյունաբերական հաշվարկներում դժվար չէ նկատել քրիստոնյա բուրժուազիայի ուժը: Այս հարստությունը կուրացրել էր երիտթուրքերի բյուրոկրատիայի աչքերը: Բալկանյան պատերազմը պատրվակ բերելով՝ Էգեյան շրջանում հույների նկատմամբ ճնշումների, սպառնալիքների եւ ոճրագործությունների քաղաքականություն իրականացնելով՝ վճռեցին իրենց հնագույն հողերից: Սրա համար անհրաժեշտ էր պատրաստել տեղացի մուսուլման բնակչությանը: Երիտթուրքերը Անատոլիա էին եկել հրոսակախմբերի հետ

միասին: Հետեւաբար, նրանք չունենին ո՛չ տեղացի իսլամ բնակչությանը սադրելու եւ ո՛չ էլ ճնշումներ եւ սպանություններ իրականացնելու կադրերի պակաս:

Այդընի պատգամավոր էմանուէլ էմանուէլիդիսը քրիստոնյաների դեմ ձեւավորված մթնոլորտն այսպես է ներկայացնում. «Մի կողմից՝ նախապատրաստում էին կիրառվելիք ուժը, մյուս կողմից՝ կյանքի կոչվող համապատասխան գաղափարախոսությամբ ժողովուրդը պատրաստվում էր մոտեցող հեղաշրջմանը: Լրագրությունն ազդեցություն էր գործում ժողովրդի տեսակետների վրա, բաժանված տարատեսակ օրաթերթերը նպատակ էին հետապնդում բորբոքել հույների հանդեպ չմարող ատելությունը: Այս տպագրությունների միտք բանին այն էր, որ քանի դեռ հույները հայրենիքում գոյություն ունեն, թուրքերն աղքատ են լինելու, մուսուլմանների պատիվն ու կյանքն անապահով էին լինելու, պետությունն էլ տարատեսակ վտանգների է ենթարկվելու: Լույս էին տեսնում նկարներ, որտեղ պատկերված էին բալկանյան ղեկավարները ձիով՝ կանանց եւ երեխաների դիակների, թուրքական դրոշների վրա քայլելիս, տհաճ քարտեզներ հրապարակելով՝ ձեռքից գնացող նահանգները ցուցադրվում էին սեւ գույնով, որոնք կախում էին դպրոցների պատերին, ներքեւում գրում էին վրեժ բառը, նույնիսկ Բուլղարիային միացված շրջանը սուգի գույնով՝ սեւով էր ծածկված. սրա պատասխանը եւս պետք է հելլենիզմը տար: Վրեժի եւ ատելության հրեշտակների նման երկրի չորս ծայրերն ուղարկեցին ելույթներ ունեցողների եւ պրոպագանդիստների»:

Էմանուէլիդիսի ներկայացրած հակաքրիստոնեական ատելության՝ կարճ ժամանակահատվածում անասելի չափերի հասած մթնոլորտում Էգեյան շրջանի հույների մեծ մասին արմատախիլ արեցին իրենց պատմական հողերից, իսկ ունեցվածքին տիրացան տեղական իթթիհադականները:

Ի դեպ, էմանուէլիդիսը Հայոց ցեղասպանության մասին ասում է. «Հայկական աղետն ընդգրկել է ողջ Թուրքիան: Յուրաքանչյուր քաղաք, գյուղ, անկյուն զրկվել է իր բնակիչներից: Ջերժ են մնացել միայն Ստամբուլը, Ջմյուռնիան եւ Հալեպը: Սակայն սա չի նշանակում, թե այնտեղի հայերը վնաս չեն կրել, քանի որ Ստամբուլում աքսորյալների խմբի մեջ ներառելու համար հարյուրավոր հայերի էին ձերբակալել: Իզմիրում հայերը քիչ էին: Այնտեղ հիմնական վտանգը ներկայացնում էին մեծաթիվ հույները: Բնականաբար, երբ հերթը գար հույներին, այնտեղի հայերի հարցերն էլ էին լուծելու»:

Հարց – Ընդհանրապես, Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկումների ժամանակ թուրքերի մեծամասնությունն ասում է, թե «մենք մեղավոր չենք, հայերը մուսուլմաններին սպանելիս իրենք էլ են ոչնչացվել»: Իսկ ինչպե՞ս է ընկալում թուրք հասարակությունը Ձմյուռնիայի ջարդերը, նման հակազդեցություն կա՞:

Պատասխան – Թուրք հասարակությունը չգիտի Ձմյուռնիայի ջարդերի մասին: Իմ բարեկամ պատմաբան Այշե Հյուրի՝ այս թեմայով հրապարակած հոդվածներից բացի՝ միակ կանոնավոր աշխատությունը Մաժրի Հովսեփյան *Դոբլինի՝ անցյալ տարի լույս ընծայած «Ձմյուռնիան 1922 թվականին. քաղաքի ավերումը»* աշխատությունն է, որի ուսումնասիրության առարկան թեև 1922թ. Ձմյուռնիան է, սակայն հակիրճ ներկայացնում է ընդարձակ օսմանյան հողերի վրա ապրող քրիստոնյա տարրի՝ ալիք առ ալիք բռնությունների ենթարկվելով համակարգված բնաջնջումն ու իրենց պատմական հողերից մաքրումը: Հեղինակն ընթերցողներին է ներկայացնում ոչ միայն 1922թ. Ձմյուռնիայի աննկարագրելի այդ օրերը, այլև հետագա դեպքերը՝ օգտվելով տարբեր աղբյուրներից:

Թուրք հասարակությունը նոր է տեղեկանում այս կոտորածի մասին: Ձմյուռնիայի ջարդերն ինչպես ցեղասպանության, այնպես էլ ժխտողականության մի մասն են կազմում: Տարիներ շարունակ ջանասիրաբար կոծկված ոչ հեռու անցյալի սեւ կետերից մեկն է սա:

Հարց – Ըստ Ձեզ՝ հայ եւ թուրք հասարակությունների հաշտեցման գործընթացն ինչպե՞ս պետք է իրականացնել:

Պատասխան – Գրեթե չկա մեկը, ով չիմանա Հայոց ցեղասպանության մասին, հայերի, հույների, ասորիների եւ պոնտացիների ունեցվածքին տիրացած չլինի: Երիտթուրքերի խորհրդարանի նախագահ եւ արտգործնախարար, քեմալականների օրոք էլ պատգամավոր նշանակված Հալիլ Մենթեշեի հուշերում առկա դատողությունը, թե շատ քչերն են, որ չեն մասնակցել այս ցեղասպանությանը, շատ կարելոր իրականություն է մատնանշում: Այսօր թուրքական եւ մուսուլմանական կապիտալն այս բռնագրաված ունեցվածքի հենքի վրա է աճել: Որ հարստության հենքն էլ որ փորփրեք, զարմանալի չի լինի, եթե հանդիպեք հայերից, հույներից, ասորիներից եւ պոնտացիներից հափշտակված ունեցվածքի: Հայերի եւ հույների հարստության հետ մեկտեղ՝ մեկ այլ իրականություն է գենոֆոնդի յուրացումը:

Նման մթնոլորտում հաշտեցումն ինչպե՞ս է լինելու: Անհրաժեշտ է, որ այս հողերի վրա ապրող հնագույն ժողովուրդների կրած տառապանքը պատասխան ստանա, առանց այդ գինը վճարելու որեւէ հաշտեցում քննարկման առարկա չէ: Այստեղ չպետք է եզրակացնել, թե ցեղասպանության, արյան գին է պահանջվում: Մարդկությունը դեռ որեւէ բան չի հնարել, որը կարող է փոխհատուցել մարդկության կրած տառապանքների գինը: Քայլը, որ պետք է կատարել, պետք է այնքան անկեղծ լինի, որ թեթևացնի մարդկանց կրած ցավերը, եւ սա զոհը չպետք է կատարի: Այս քայլը, որպես մարդկության հանդեպ պարտք, ընկած է ցեղասպանության ոճրագործների ուսերին:

*Հարցազրույցը վարեց **Անահիտ Քարտաշյանը**
(տպագրվում է կրճատումներով)*

Akunq.net

10.10.2012

«Ի՛նչ որ կը մնայ՝ հայ մանուկն է հայրենի հողին վրայ»

ՕՐԱԳԻՐ

Գիշերը ուշ է, եւ հոգիս կրնայ յուսահատութենէն սրբապղծութեան երթալ, եթէ ազատ բեմ ձգեմ զայն: Թո՛ղ աշխարհի բոլոր սահմաններուն վրայ, բոլոր քաղաքներուն մէջ, բոլոր անդերուն ու բոլոր բնակութեան վայրերուն մէջ կիսով ու ծացած հայոց հետքը չմնար՝ միայն թէ մեր երկիրը կարենար վաղուան առաւօտը ողջունել՝ առանց նոր փլատակներու, առանց նոր կործանումներու: Փարիզէն մինչեւ Պուէնոս-Այրէս, Լեմպերկէն մինչեւ Թորոնթօ, Պերլինէն մինչեւ Եոքոհամա թո՛ղ ջնջուէր վերջին հետքը այս բոլոր հէզ գաղթականներուն, որ մենք ենք, միայն թէ մեր բարձրաւանդակին ապերախտ հողերուն վրայ՝ գարունը գար առանց աղէտի, միայն թէ նոր տնկուած ծառերը վերստին չտապալէին, միայն թէ մեր երկրին մանուկները վերստին կեր չդառնային օտար գթութեան: Թո՛ղ օտարութեան այս բոլոր եզերքներուն վրայ վերջին հայերէն բառը խեղդուէր վերջին հայուն կոկորդին մէջ՝ միայն թէ մեր հազարամեայ հողերուն վրայ ցարասիներն ու բարտիները շարունակէին դողդոջել իրենց հայերէն երգը եւ ժողովուրդը շարունակէր հողը հերկել մեր ակօսներուն մէջ: Թո՛ղ վերջին հայ կրեստսին վերջին արծաթի կտորը, աղտեղութեամբ շահուած, բռնագրաւուէր այս ափերուն վրայ՝ միայն թէ Շիրակայ դաշտին մէջ ցորենները ուղէշ-ուղէշ բարձրանային ու գետնախնձորի ուռերը աւիշով ուռճանային:

Ոչինչ աւելի թանկագին է երկրի վրայ, քան հայրենի հողը: Կ'անցնին բոլոր փառքերն ու բոլոր որոտընդոստ երգերը, երբ անոնք չեն բխիր հայրենի երկրին ընդերքներէն: Կ'անցնին բոլոր պերճանքներն ու բոլոր պալատները, երբ իրենց շուքը չեն ձգեր հայրենի ջրերուն վրայ: Կ'անցնին մարդիկը իրենք, հեռագնաց պէս, կ'անցնին փոշիի ամպերու եւ թեթեւ եղանակներու պէս, եթէ իրենց մազարմատներով չեն խրած երկրին բուսահողին մէջ: Ի՞նչ մնացած է կանգուն, հայ ազգին առընչութեամբ, բոլոր Չմշկիկներէն ու բոլոր Էլեոնորա Տիւզերէն: Ի՞նչ մնացած է կանգուն, վաղուան մեր գեղեցկութեան ու փառքին համար, Վոսփորի եզերքը կառուցուած բոլոր Չրաղանի պալատներէն, մզկիթներէն ու բաղնիքներէն: Ո՛չ մէկ ամիրա ու ո՛չ մէկ Նուպար փաշա, ո՛չ մէկ Նորատունկեան Էֆէնտի ու

ո՛չ մէկ Թրանքօ Եաշ կը փոխարինեն հազար շինականներ, որ մեր գիւղերուն մէջ, իրենց մագիլներով հայրենի հողը կը փորեն: Կ'անցնին բոլոր օտար սէրերն ու օտար տենչանքները, կ'անցնին բոլոր ճերմակ աղջիկներն ու բոլոր գարունները, եւ ո՛չ մէկ վենետիկեան կոնտոլ, ո՛չ մէկ լուսնի լոյս, ո՛չ մէկ վիեննական վալս կրնար վերադարձնել մեզի մեր մայրերուն քաղցր ժպիտը: Կ'անցնին առաջին նոր եղանակներուն ու նոր դարաշրջանին հետ՝ նոյնիսկ համակրելի Ուիլերմ Սարոյեանները,– ի՛նչ որ կը մնայ՝ մեր երգն է Արաքսի ափերուն վրայ, ի՛նչ որ կը մնայ՝ Աբովեանի ստուերն է, որ կը յածի Քանաքեռէն մինչեւ Աշտարակ: Կ'անցնին բոլոր խուճապահար սէրերը, որ չեն ելլեր մեր դալարիքներէն, կ'անցնին բոլոր իշխանութիւններն ու բոլոր զօրութիւնները, որ չեն ծառայեր մեր հողերուն շէնութեան: Կ'անցնին օտար եզերքներու վրայ՝ մեր բոլոր կարօտներն իսկ, վասնզի բեղմնաւոր չեն: Ի՛նչ որ կը մնայ՝ մեր բիծաներուն բնիկ բարբառն է, որուն հնչիւններուն մէջէն մարդ ալանջը լարելով կրնայ լսել հին հայոց տոհմիկ շեշտը: Թո՛ղ Սէն-Լուէն մինչեւ Ֆրեզո, Պէյրութէն մինչեւ Շանկհայ մեր շինած տուներէ՛ ո՛չ մէկ պատ քար-քարի վրայ մնար՝ միայն թէ մեր անդերէն ու մեր ճամբաներէն նոր հորդաներ քառասմբակ չարշաւէին, անգամ մը եւս կոխկրտելով մեր սրբութիւնը:

Աշխարհի բոլոր ճամբաներէն ու բոլոր փառքերէն, աշխարհի բոլոր հաճոյքներէն ու բոլոր կիներէն՝ մեր քայլերը, ուշ կամ կանուխ, պիտի վերադառնան մեր տութեան, եթէ ազնիւ է մեր հոգին: Լսէ՛ ի՛նչ երգ որ կայ Սէնի ափերէն մինչեւ Նիւ Եորքի հսկայ սրահներուն մէջ,– վերադարձը միշտ կարելի է, եթէ երկիրը կը շարունակէ արթննալ ի կեանք ամէ՛ն գարնան: Կ'անցնին բոլոր փիլիսոփայութիւններն ու կ'անցնին բոլոր օտար կրքերը, ի՛նչ որ կը մնայ՝ ժողովուրդն է, իր բեղուն երանգներով, ուր կ'եռելեփին վաղուան բոլոր փառքերն ու բոլոր յաղթանակները: Որքան ատեն, որ կանգուն է մեր մեծ լեռը եւ անոր արքայական ստուերին տակ ազգը կ'ապրի, հոգ չէ թէ տուայտանքով, կարելի են բոլոր զարթօնքները: Կ'անցնին բոլոր վերքերն ու բոլոր յուսահատութիւնները, բոլոր նուաստութիւններն ու բոլոր ստորջանքները,– ի՛նչ որ կը մնայ՝ հայ մանուկն է հայրենի հողին վրայ: Ահա այս պէտք է ըլլայ մեր Ալֆան ու մեր Օմեգան, մեր ճշմարտութիւնն ու մեր արդարութիւնը: Թո՛ղ այս օտար եզերքներուն վրայ մեր վերջին երգը լռէ յաւիտեանս յաւիտենից՝ միայն թէ հայ շինականը լուսաբացին կարենայ իր զուարթութիւնը մրմնջել:

Թո՛ղ նոր աժդահա մը ելլէր Երկրքին Մասեաց վրայ, սրունքներէն մէկը նետէր մէկ լերան ու միւսը Արագածի լերկ գագաթին ու ողջ Դայոց

աշխարհը երիկամունքներեն սարսող ծայնով մը որոտար, լեցնելով կիրճերու մեր խոնարհ գիւղերը, Սանահինէն մինչեւ Սեւանի եզերքը, Ձանգեգուրէն մինչեւ Շիրակայ դաշտը, թո՛ղ իր որոտը գոռալով թաւալէր աւաններէն ու քաղաքներէն.

«Կ'անցնին բոլոր փոթորիկներն ու բոլոր ահագնադղորդ պատերազմները, կ'անցնին բոլոր հորդամերն ու բոլոր բարբարոսները, կ'անցնին բոլոր հերետիկոսներն ու բոլոր պզտիկ պարոնները՝ իրենց սուտ իմաստութեամբ, Յայոց Ազգ, քայլերդ դուրս մի՛ նետեր այս աւանդակներէն, այս ծործորներէն ու այս խոպան հողերէն: Եթէ նոյնիսկ բազուկներդ չկրնան հրացան բռնել, մագիլներովդ ճանկէ՛ արդարութիւնդ, եթէ նոյնիսկ ստիպուած ըլլաս անգամ մը եւս ողնայարդ ծռել, ողջ հասակովդ ինկի՛ր մեր կարմիր հողերուն վրայ: Աւելի լաւ է սողալ այստեղ՝ քան թէ գլուխ ցցել ուրիշին սահմաններուն վրայ: Ո՛չ մէկ նոր ելք այլեւս այս հողերէն: Ճակատագիրդ հոս է եւ սրբութիւնդ հոս, վասնզի հոս է միայն, որ վաղը բոլոր փառքերը կրնան արթննալ եւ բոլոր ցորենները բարձրանալ, գեղուղէշ, բոլոր ակօսներէն...»:

Վազգէն Շուշանեան

Փարիզ, 16 փետր. 1943թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հենրի Քիսինջեր ՌԻՆԻՎԵՐՍԱԼԻԶՄԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ	1
Ֆեոդոր Լուկյանով ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՐՔԵՐԸ. <i>ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՆԴՈՒՆԴ</i>	8
Գազիկ Տեր-Հարությունյան ՍԻՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. <i>ԳԼՈՐԱԼ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԻԶԱԿԵՏ</i>	12
Հայկ Գաբրիելյան ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐՔ-ԻՐԱՔՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	19
Սեւակ Սարուխանյան ԻՐԱՆԸ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ	25
Արտաշես Տեր-Հարությունյան ԵՎՐՈՊԱ. ՎԵՐԻՆՏԵԳՐՈ՞ՒՄ, ԹԵ՞ <i>ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՐԱԶԵՎՈՒՄ</i>	31
Սայիդ Չեթինօղլու «ՇԱՏ ՔՉԵՐՆ ԵՆ, ՈՐ ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ»	36
Վազգէն Շուշանեան «Ի՛ՆՉ ՈՐ ԿԸ ՄՆԱՅ՝ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆ Է ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ»	42

Շապիկին պատկերված է
Ամյուկ բերդը
(Թիմար գավառ)

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակները՝ «Arial Armenian», «Hay Helv»
եւ «VS Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: